

Ատրպեյճանական նախադարձակ Բանակը Ջախջախուեցաւ Կացուծիւնը Հանդարտած է Արցախի Սահմանին Վրայ Հայաստան Կը Սպառնայ Գանչնալ Լեռնային Ղարաբաղի Անկախութիւնը

Ապրիլ 1-2-ի առաւօտեան Ատրպեյճանի բանակը 1994 թուականի գինադադարէն ասդին կատարեց իր ամէնէն լայնածաւալ գործողութիւնը՝ Արցախի հետ սահմանին վրայ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան շփման գիծի ամբողջ երկայնքին՝ հիւսիսէն մինչեւ հարաւ ու ժամեր շարունակ ծանր մարտեր տեղի ունեցան մասնաւորաբար հիւսիսային Մարտակերտի եւ հարաւային Հատրուծի սահմանային դիրքերուն մօտ: Հակառակորդը իր ջանքերը կեդրոնացուց Մարտակերտի սահմանային թափի շրջանին ուղղութեամբ, հայկական դիրքերուն տիրապետելու եւ Սարսանկի ջրամբարին կից ռազմավարական կեդրոններուն հասնելու նպատակով:

Տեղի ունեցան դաժան մարտերու ընթացքին, Արցախի պաշտպանութեան բանակը յաջողեցաւ ետ մղել թշնամիի բոլոր յարձակումները ու մնալով իր դիրքերուն վրայ, Ապրիլ 5-ին ստիպեց նախադարձակ կողմին դադարեցնելու կրակը:

Նախքան մարտական լայնածաւալ գործողութիւններու դադարեցումը, Ապրիլ 4-ին Մատա-

ղիսի ուղղութեամբ տեղի ունեցած ծանր մարտերու ընթացքին հակառակորդի կողմը սկսած է խուճապային վիճակ, որու ընթացքին ազերի բանակը ռազմադաշտի վրայ ձգելով իր գինուորներու դիակները դիմած է փախուստի: Ատրպեյճանական ուժերը իրենց ունեցած գրեթէ ամբողջ ծանր զէնքերու տեսականին օգտագործած են նաեւ այդ ուղղութեամբ եւ նախապէս լուրեր տարածած են թէ, գրաւած են Մատաղիսը, ենթադրելով թէ հայկական կողմը այդպիսով կը նահանջէ եւ իրենք յաղթական կը մտնեն Մատաղիս: Բայց ամբողջութեամբ հակառակը եղած է եւ այդ գնդակոծութիւններէն յետոյ հայկական զինեալ ուժերը համարժէք պատասխան տալով, ստիպած են թշնամիին հեռանալ իրենց դիրքերէն:

Ղարաբաղեան կողմը նաեւ յայտարարեց, որ ոչնչացուցած է իսրայէլական արտադրութեան մի քանի թռչող անօդաչու սարք, որոնք այս գործողութիւններու ընթացքին լայնօրէն կ'օգտագործուէին Ատրպեյճանի կողմէ:

Ապրիլ 5-ին, ԼՂՀ Պաշտպանութեան բանակը յայտարարեց որ, այս պահի դրութեամբ որեւէ դիրք




Հայկական զօրքերը Մարտակերտի մօտ կը ուժրակոծեն թշնամիի դիրքերը

հակառակորդի վերահսկողութեան տակ չի գտնուիր:

Պաշտպանութեան նախարարութիւնը նաեւ նոր տուեալներ ներկայացուց հայկական կողմի կորուստներու վերաբերեալ: Ապրիլի 1-ին սկսած բախումներու հետեւանքով հայկական կողմը կորսնցուցած է 29 զինուոր, վիրաւորուած է 101: 28 ծառայողներ

ճակատագիրը կը մնայ անյայտ: Հայկական կողմը կորսնցուցած է նաեւ 14 հրասայլ: Ատրպեյճանի կողմէ սկսած ռազմական գործողութիւններէն ետք, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան սպառնաց ռազմական փոխօգնութեան պայմանագիր կնքել Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ու ճանչնալ Արցախի անկախութիւնը:



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽՍՏՕՐԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Միակողմանիօրէն խախտելով իր իսկ կողմէ ստորագրուած գինադադարը, Ատրպեյճանի իշխանական արկածախնդիր վերնախար Արցախի խաղաղ բնակչութեան վրայ ուղղած է իր հորդանքերը, որոնք վայրագարար անմեղ երեխաներու վրայ կրակ կը բանան:

Միջազգային հանրութեան աչիւն առջեւ գարգացող եւ նոյն հանրութեան անտարբեր կեցուածքէն իրախուսուած Ատրպեյճանական այս նախադարձակ գործողութիւնները կասեցուած են հայոց քաջարի զինուորներու կողմէ, որոնց շարքերը տուած են քանկազին գոհեր եւ վիրաւորներ:

Բուռն կերպով դատապարտելով Ատրպեյճանական ոսնձգութիւնները, մեմֆ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ գործող ազգային երեմ կուսակցութեանց ղեկավար մարմիններս, մեր շարքերուն եւ համակիրներուն անուանով կը յայտարարենք:

1. Մեր ամբողջական զօրակցութիւնը Արցախի եւ անոր անվտանգութեան երաշխաւոր Հայաստանի Հանրապետութեան պետական կառոյցներուն, Հայոց բանակին եւ հայրենի ժողովուրդին.
2. Մեր վեճակաւորութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներու բարձրագոյն իշխանութիւնները Ատրպեյճանական ուժերը սանձելու գործնական քայլերու մղելու ուղղութեամբ.
3. Մեր յանձնարարութիւնը յաւելեալ ջանքերով հետապնդելու

Հայ Ամերիկեան Խորհուրդի Եւ Հայ Եւրոպական Խորհուրդի Միացեալ Յայտարարութիւն Լեռնային Ղարաբաղի Դեմ Ատրպեյճանական Յարձակումներուն Առթիւ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) եւ Հայ Եւրոպական Խորհուրդը (ՀԵԽ) Ապրիլ 3-ին հանդէս եկան միացեալ յայտարարութեամբ մը՝ ուղղուած Միացեալ Նահանգներու պետական մարմիններուն եւ Եւրոպական կառոյցներուն:

Միացեալ յայտարարութեան մէջ ըստուած էր.
Հայ Ամերիկեան Խորհուրդը եւ Հայ Եւրոպական Խորհուրդը կը դիմեն Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Խորհուրդի (ԵԱՀԽ) Մինսկի Խումբին, անմիջական քայլեր ձեռնարկելու, դատապարտելու համար Ազերի վարչախումբի գրգռութիւնները Լեռնային Ղարաբաղի դէմ:

ՀԱԽ եւ ՀԵԽ նաեւ կոչ կ'ուղղեն Ֆրանսայի Եւ Միացեալ Նահանգներու կառավարութիւններուն, որպէս անդամ երկիրներ Մինսկի Խումբին, ազդու կերպով դատապարտելու Ատրպեյճանի բանակի գործողութիւնները, որոնք կը հանդիսանան 1994 թուականի գինադադարէն ասդին կատարուող ամենայ լայնածաւալ յարձակումները:

Նշմարելի է որ, այս զարգացումները անմիջապէս կը յաջորդեն այն հանդիպումներուն, որ ունեցաւ Ազերի նախագահ Իլհամ Ալիեւ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Ճօ Պայտընի, Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղար Ճոն Քէրիի, ինչպէս նաեւ ԵԱՀԽ-ի անդամ այլ երկիրներու ղեկավարներուն հետ: Դժբախտաբար, այս հանդիպումներու ընթացքին եղած կոչերը՝ Լեռնային Ղարաբաղի հարցը խաղաղ միջոցներով լուծելու ուղղութեամբ, անտեսուեցան Պր. Ալիեւի կողմէ:

Ինչպէս կը տեղեկացնեն մամուլի բազմաթիւ աղբիւրներ, Ատրպեյճանական բանակը Շաբաթ օր հաստատած է, որ իր ուժերը նախաձեռնած են լայնածաւալ, առանց դրդապատճառի գինուորական գործողութիւն-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռազմական Փոխօգնության Պայմանագիրը Կարող է Հիմք Հանդիսանալ ԼՂ Ճանաչման

«Եթե ռազմական գործողությունները շարունակուեն եւ ստանան լայնածավալ մասշտաբ, Հայաստանի Հանրապետությունը ճանաչելու է Լեռնային Ղարաբաղի անկախությունը», - Եւրոպայում Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) անդամ երկրների դեսպաններին հետ հանդիպման ժամանակ յայտարարել է նախագահ Սերժ Սարգսեանը՝ ընդգծելով, որ Հայաստանը որպէս 1994 թուականի գինդադադարի համաձայնագրի կողմ, շարունակելու է լիարժէքօրէն կատարել Լեռնային Ղարաբաղի բնակչութեան անվտանգութեան ապահովման իր պարտաւորությունները:

Սերժ Սարգսեանը նաեւ տեղեկացրել է, որ արդէն հրահանգել է Արտաքին գործերի նախարարութեանը՝ աշխատել Ղարաբաղի հետ ռազմական փոխօգնութեան պայմանագիր կնքելու ուղղութեամբ:

Հայաստանի խորհրդարանը պաշտպանում է ՀՀ նախագահի առաջարկը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հետ ռազմական փոխօգնութեան պայմանագիր կնքելու մասին: Այս մասին NEWS.am-ին յայտնել է ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը:

Նա յիշեցրել է, որ Հայաստանի նախագահը ԱԳՆ-ին յանձնարարել է կապ հաստատել ԼՂՀ ԱԳՆ-ի հետ, որպէսզի հնարաւորինս սեղմ ժամկէտներում ընդունուի ռազմական փոխօգնութեան պայմանագրի մասին հարցը: «Եւ ես՝ որպէս ԱԺ փոխխոսնակ, կարող եմ ասել, որ օրէնքի շրջանակներում խորհրդարանը պատրաստ է կատարել յանձնարարությունը: Կարծում եմ, որ բոլոր խորհրդարանի քաղաքական ուժերը կը համաձայնեն նման պայմանագիր կնքել, քանի որ Հայաստանը ԼՂՀ անվտանգութեան երաշխաւորն է համարում: Եւ մենք առաջին հերթին պէտք է կարողանանք ապահովել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը», - ընդգծել է Շարմազանովը:

Այդ տեսակէտից, նրա խօսքով, Հայաստանի բացառապէս բոլոր քաղաքական ուժերը կանգնած են պետութեան կողքին, Ձինուած ուժերի կողքին՝ յանուն Արցախի հայերի արդար իրաւունքների պաշտպանութեան: «Խորհրդարանն աջակցում է նախագահի առաջարկին, եւ օրէնքով սահմանուած ժամկէտում, երբ համաձայնագիրը լինի Ազգային ժողովում, մենք այն կը վաւերացնենք»:

Ստեփանակերտը Ձգուշացնում է Անճամբ Հասանովին Եւ Նրա Գերագոյնին



Հայ գինուորները պաշտպանական դիրքեր գրաւած են սահմանի վրայ

Լեռնային Ղարաբաղի եւ Ատրպէյճանի հակամարտ գործերի շփման գծում շարունակուած են մարտական գործողությունները, հաղորդում է Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը:

«Օրուայ ընթացքում հակառակորդը, բացի նախօրէին գործածութեան մէջ դրած զինատեսակներից, սկսել է կիրառել նաեւ սեփական զինանոցում կուտակուած «ԶԿ 1» տիպի ծանր հրանետային համակարգեր, հարուածային անօդաչու թռչող սարքեր ու այլ ժամանակակից զինտեխնիկայ: Սակայն այս ամէնի արդիւնքում անգամ ատրպէյճանական զինուժին չյաջողուեց ռազմաճակատում փոխել դէպքերի զարգացման ընթացքն ի օգուտ իրեն», - ասուած է հաղորդագրութիւնում:

Հակադարձելով «Ատրպէյճանի ռազմական ղեկավարութեան կողմից արուած անհաւասարակշիռ յայտարարութիւնը, ըստ որի

նրանք հանդէս են գալիս Արցախի Հանրապետութեան խաղաղ բնակավայրերի եւ մասնաւորապէս մայրաքաղաք Ստեփանակերտի ու մասնաւորապէս սպառնալիքներով», Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը զգուշացնում է «անձամբ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար շահասանովին եւ նրա «գերագոյնին», որ նման զարգացումների դէպքում արձագանգը լինելու է անհամաչափ եւ աւելի ցաւոտ»:

Նշենք, որ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարը, ըստ տեղական լրատուամիջոցների, «հրահանգել է զինուած ուժերի բոլոր տեսակներին, այդ թւում՝ հրթիռահրետանային գործերին, պատրաստ լինել կործանիչ հարուած հասցնելու Խանքենդիին (Ստեփանակերտին) եւ օկուպացուած միւս բնակավայրերին՝ Ատրպէյճանի ԶՈՒ տրամադրութեան տակ գտնուող ծանր սպառազինութեան կիրաւումը»:

«Անհնար է Գտնել Քաղաքացիական Բնակչութեան Նկատմամբ Բարբարոսութեան Որեւէ Արդարացում»

«Հայաստանը կարեւորում է, որ միջազգային հանրութիւնը, ներառեալ մարդու եւ մարդասիրական իրաւունքի օրակարգով գործող միջազգային կառույցները, խստագոյնս դատապարտեն Ատրպէյճանի կողմից Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական անձանց հանդէպ կիրառուող բռնութիւնները: Նման ոճրագործութիւններ ծրագրողները եւ իրականացնողները պէտք է ենթարկուեն արժանի պատասխանատուութեան», - յայտարարել է Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Շաւարշ Քոչարեանը:

Պատասխանելով «Արմենպրես»-ի հարցին՝ փոխարտգործնախարարը նշել է, որ ատրպէյճանական գործողութիւնների առաջին իսկ ժամերից «միտումնաւոր եւ անխտիր թիրախաւորուել են քաղաքացիական օբյեկտները եւ քաղաքացիական անձինք, այդ թւում երեխաներ եւ տարեց մարդիկ»: Խաղաղ բնակչութեան թւում առաջին տուժածներից էին ատրպէյճանական կրակից սպանուած 12-ամեայ վաղիկակա թաթուլի Գրիգորեանը, ինչպէս նաեւ եւս երկու

վիրաւորուած դպրոցականներ: «Ատրպէյճանը խախտում է Միջազգային մարդու եւ մարդասիրական իրաւունքը, մասնաւորապէս Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիրը, 1949թ. ժնեւեան կոնվենցիաները, 1977թ. Լրացուցիչ արձանագրութիւնները, Երեխաների իրաւունքների մասին 1989թ. կոնվենցիան», - ասել է Քոչարեանը:

«Արցախի Մարտակերտի շրջանի թաւիշ գիւղում ատրպէյճանական զինծառայողները զագանաբար խոշտանգել, խեղել եւ սպանել են Խալափեանների ընտանիքի երեք անդամների, որոնցից ամենատարեցը 1924 թ. ծնուած Մարուսիա Խալափեանն էր: Անհնար է գտնել քաղաքացիական բնակչութեան նկատմամբ նման բարբարոսութեան որեւէ արդարացում: Ատրպէյճանական բանակի գործողութիւնները դուրս են գտնուում ոչ միայն վերոնշեալ կոնվենցիաների, պատերազմի սովորութեան իրաւունքի, այլ նաեւ որեւէ քաղաքակրթութեան տարրական նորմերի սահմաններից», - նաեւ ասել է Հայաստանի փոխարտգործնախարարը:

գործընթացի այլ փաստաթղթերի, մի շարք այլ միջազգային իրաւա-

կան փաստաթղթերի խախտում», - ասուած է յայտարարութիւնում:

Հայաստանի ՊՆ. «Բարուն Իրաւական Պատասխանատութեան Պէտք է Ենթարկուի»

Իրականացուած միջազգային իրաւունքի խախտումների եւ պատերազմական յանցագործութիւնների համար թէ՛ Ատրպէյճանի իշխանութիւնները եւ թէ՛ ռազմական յանցագործութիւններ կատարած անձինք իրաւական պատասխանատուութեան պէտք է ենթարկուեն, այդ թւում՝ միջազգային հանրութեան առջեւ: Այդ մասին յայտարարել է Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը:

Նշելով, որ Ապրիլի 2-ից սկսած միջազգային հանրութիւնը ակտիւ կերպով իր մտահոգութիւնն է յայտնում Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադրութեան ապակայունացման վերաբերեալ, բոլոր միջազգային եւ տարածաշրջանային կազմակերպութիւնները եւ առանձին պետութիւնները հակամարտութեան կողմերին կոչ են անում դրսեւորել զսպուածութիւն, դադարեցնել ռազմական գործողութիւնները, զերծ մնալ իրադրութիւնը լարելու քայլերից, Հայաստանի ռազմական գերատեսչութիւնը իր յայտարարութիւնում ընդգծում է, որ մեծապէս կարեւորում է միջազգային հանրութեան արձագանգը եւ հակամարտութեան կողմերին ուղղուած կոչերը:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնն ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետութիւնը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգութեան երաշխաւոր: «Միեւնոյն ժամանակ, որպէս ռազմական գործողութիւններին չմասնակցող կողմ՝ ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը յատկապէս գնահատելի է համարում այն հանգամանքը, որ այդ կոչերն ուղղուած են փաստացի այդ գործողութիւնների մէջ ներգրաւուած կողմերին՝ Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններին», - ասուած է



յայտարարութիւնում: Համակարծիք լինելով ռազմական գործողութիւնների դադարեցման կոչերին, Հայաստանի պաշտպանական գերատեսչութիւնը միջազգային հանրութեան ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի ուժերի միջեւ հրադադարի ռեժիմի հաստատման համար, քաղաքական յայտարարութիւններից զատ, անհրաժեշտ է համաձայնեցնել եւ իրականացնել կոնկրետ միջոցառումներ. մշակել հրադադարի սահմանման տեխնիկական պայմաններ, իրականացնել հակամարտող ուժերի հեռացում/բաժանում եւ հրադադարի ռեժիմի պահպանման մեխանիզմներ:

«Միաժամանակ, ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը միջազգային հանրութեան, այդ թւում՝ մարդու իրաւունքներով, մարդասիրական ինդիկներով զբաղուող միջազգային կազմակերպութիւնների ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Ատրպէյճանի իշխանութիւնների կողմից սանձազերծուած ռազմական գործողութիւնները հանդիսանում են ՄԱԿ-ի Կանոնադրութեան, ԵԱՀԿ 1975թ. Եզրափակիչ ակտի եւ Հելսինքսն

ԼՈՒՐԵՐ

ԵԱՀԿ Մինսկի խումբի Կոչը Կողմերուն

ԵԱՀԿ Մինսկի խումբը դարաբաղեան հակամարտութեան կողմերին կոչ է անել անյապաղ դադարեցնել կրակը: Այս մասին ասուած է Ապրիլի 5-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի հանդիպման արդիւնքում արուած յայտարարութեան մէջ:

«Մենք խստորեն դատապարտում ենք շփման գծի երկայնքով տեղ գտած աննախադէպ բռնութիւնները: Մենք ցաւակցում ենք բոլոր տուժած ընտանիքներին: Մենք կողմերին յորդորում ենք անյապաղ դադարեցնել ուժի կիրառումը: Այս հակամարտութիւնը ռազմական լուծում չունի», - յայտարարել է Մինսկի խումբը եւ ընդգծում ստեղծուած իրավիճակում համանախագահների հովանու ներքոյ անյապաղ բանակցութիւններ սկսելու անհրաժեշտութիւնը:

Միաժամանակ յայտնի է դար-

ձել, որ Մինսկի խմբի համանախագահները կը ժամանեն տարածաշրջան: Միջնորդները կը լինեն նախ Բաքու, ապա Ստեփանակերտում եւ Երեւանում: Այցի նպատակն է Ատրպէյջանի եւ Հայաստանի քաղաքական ղեկավարութեան հետ երկխօսութիւն վարելը՝ բոլոր կողմերի միջեւ հրադադարի ռեժիմը վերականգնելու համար:

Մինսկի խմբի յայտարարութիւնից անմիջապէս յետոյ ատրպէյջանական կողմը կէսօրից խախտել է հաստատուած յարաբերական անդորրը եւ կրակը Արցախի պաշտպանական բանակի դիրքերի ուղղութեամբ, թէեւ ոչ նախկին ինտենսիւթեամբ: Արցախի Պաշտպանութեան բանակը յայտարարել է, որ ձեռնպահ է մնում հակաքայքերից եւ փորձում է հաւատարիմ մնալ կրակի դադարեցման մասին պայմանաւորուածութեանը:

Պուտինը Յեռախօսագրոյցներ է Ունեցել Իլիամ Ալիեւի Եւ Սերժ Սարգսեանի Յետ



Իլիամ Ալիեւ Վլադիմիր Պուտին Սերժ Սարգսեան

Ռուսական կողմի նախաձեռնութեամբ Մարտ 5-ին տեղի են ունեցել նախագահ Վլադիմիր Պուտինի հեռախօսագրոյցները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի եւ Ատրպէյջանի նախագահ Իլիամ Ալիեւի հետ:

«Մանրամասնօրէն քննարկուել են դարաբաղեան հակամարտութեան գոտում իրավիճակի վերջին զարգացումները: Խորը մտահոգութիւն յայտնելով լայնածաւալ ռազմական բախումների կապակցութեամբ, որոնք հանգեցրել են բազմաթիւ մարդկային զոհերի, Վլադիմիր Պուտինը երկու կողմերին կոչ է արել անյապաղ ձեռնամուխ լինել ռազմական գործողութիւնների դադարեցմանը եւ հա-

կամարտութեան ռեժիմի պահպանմանը», - ասուած է տեղեկացնում է Ռուսաստանի նախագահի պաշտօնական կայքը:

Ռուսաստանը պարտաւորուել է շարունակել իրավիճակի կայունացմանն ուղղուած անհրաժեշտ միջնորդական ջանքերը:

Հեռախօսագրոյցների ընթացքում ընդգծուել է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդութեամբ Երեւանի եւ Բաքուի միջեւ բանակցային գործընթացի վերականգման կարելորութիւնը՝ դարաբաղեան հակամարտութեան խաղաղ հանգուցալուծում փնտնելու նպատակով:

Պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել տարբեր ձեւաչափերով շփումները շարունակելու մասին:

Ալիեւը «Անկեղծութիւն» Է Ակնկալում Յայկական Ղեկավարութիւնից

Ատրպէյջանը պատրաստ է դադարեցնել կրակը, եթէ հայկական կողմը հետեւի հրադադարի ռեժիմին, յայտարարել է այդ երկրի նախագահ Իլիամ Ալիեւը:

«Մենք կողմ ենք բանակցութիւնների շարունակմանը, սակայն, պայմանով, որ հայկական ղեկավարութիւնը գիտակցի իր սխալները եւ բանակցութիւնների սեղանի շուրջ իրեն անկեղծ պահի: Այդ դէպքում, վստահ եմ, որ կայ հարաւորութիւն հարցի խաղաղ կարգաւորման համար» ասել է Ալիեւը եւ շարունակել - «Ատրպէյջանը այսօր էլ յայտարարում է միակողմանի հրադադարի մասին, սակայն պայմանով, որ հակառա-

կողմը չօգտուի դրանից: Թող կանգ առնեն եւ մնան իրենց տեղերում: Վերջին օրերին հայերը կրակահերթերի տակ են պահում Ատրպէյջանի բնակավայրեր, կան զոհեր նաեւ քաղաքացիական անձանց շրջանում, վնասուել են շուրջ 300 տներ»:

«Մեր երկրի տարածքային ամբողջականութեան վերականգնումը Ատրպէյջանի իւրաքանչիւր քաղաքացու սուրբ պարտքն է: Մեր երկրի տարածքային ամբողջականութիւնը երբեք չի եղել եւ չի լինի բանակցութիւնների առարկայ», - յայտարարել է Ատրպէյջանի նախագահը մարտական գործողութիւններում վիրաւորուած գինձառայողներին այցելութեան ժամանակ:

Քերրին Ու Լավրովը Դատապարտել Եւ ԼՂ-ում Իրավիճակը Սրելու Որոշ «Արտաքին Խաղացողների» Փորձերը



Լավրով եւ Քերրի իրենց միջեւ կայացած հանդիպումներու ընթացքին

Ռուսաստանի արտգործնախարար Սերկէյ Լավրով եւ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրի միջեւ կայացած հեռախօսագրոյցում Հայաստանին եւ Ատրպէյջանին կոչ են արել անյապաղ դադարեցնել ռազմական գործողութիւնները:

Երկու երկրների արտաքին գերատեսչութիւնների ղեկավարները, ՏԱՍՍ-ի փոխանցմամբ,

«լուրջ մտահոգութիւն են յայտնել Լեռնային Ղարաբաղում լարուածութեան աճի կապակցութեամբ, վերահաստատելով ռազմական գործողութիւնների դադարեցման իրենց վճռական կոչը»:

Լավրովն ու Քերրին դատապարտել են որոշ «արտաքին խաղացողների» փորձերը՝ Ղարաբաղի շուրջ հակամարտութիւնը խթանելու ուղղութեամբ:

Միջազգային Լրատուամիջոցները՝ Ղարաբաղեան Բախումների Մասին

The Washington Times պարբերականը գրում է. - «Բռնութեան ամենավատ պոթկումն աւելի քան 20 տարի վիճարկուող Լեռնային Ղարաբաղի տարածքում, որը նախկին խորհրդային երկու հանրապետութիւնների միջեւ է գտնուում, ծայրայեղ լարում է առաջացրել Եւրոպայից մինչեւ Ուաշինկթըն, քանի որ մտահոգութիւններ կան, թէ բախումների նոր ալիքը կարող են հրահրած լինել Ռուսաստանը կամ Թուրքիան»:

Բրիտանական Guardian-ը ուշադրութիւն է հրաւիրում 1994 թուականի հրադադարը յարգելու՝ միջազգային հանրութեան կոչերին, վկայաբերում է Եւրամիութեան միասնական արտաքին քաղաքականութեան եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, Միացեալ ազգերի կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Բան Կի-մունի, Միացեալ Նահանգների պետքարտուղար Ջոն Քերրիի կոչերը: «Երեքն էլ Հայաստանին եւ Ատրպէյջանին յորդորում են ցուցաբերել հաւատարմութիւն Մինսկի խմբի գործընթացին, որը վերահսկում է Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութիւնը», - նկատում է պարբերականը եւ արձանագրում, որ այդ կոչերն արդիւնք չեն տուել:

Ըստ Guardian-ի՝ Լեռնային Ղարաբաղը այն սառը հակամարտութիւններից է, որն ունի ամէն պահի պոթկալու ներուժ:

Reuters գործակալութիւնը հրապարակել է կադրեր մարտադաշտից՝ հաղորդելով. - «Այս կադրերում վերջին երկու տասնամեակների ամենակատաղի մարտերն են Լեռնային Ղարաբաղում»: Reuters-ը հաղորդում է, որ ՄԱԿ-ի տուեալներով՝ անցած օրերին Լեռնային Ղարաբաղում զոհուել է առնուազն 30 գինձառայող երկու կողմից, երեք քաղաքացիական անձ, իսկ տուժածների ընդհանուր թիւը հասնում է 200-ի:

BBC-ն հրապարակել է ֆոտոնեպոտաժ, որտեղ պատկերուած լուսանկարին կից մեկնաբանութեան տեքստում նշուած է. - «Լեռնային Ղարաբաղում իրավիճակի կտրուկ սրումը վերջին օրերին շատերին է ստիպել խօսել Հայաստանի եւ Ատրպէյջանի միջեւ լայնածաւալ պատերազմի մասին»: Ֆոտոնեպոտաժը ներառում է նաեւ ատրպէյջանական դրօշով ծածկուած մարմին՝ մեկնաբանութեամբ. - «Բաքուից եւ Երեւանից հաղորդագրութիւններ են տարածուում տասնեակ զոհերի մասին: Հիմնականում զոհուում են գինձառայողներ, բայց կան զոհեր նաեւ խաղաղ բնակչութեան շրջանում»: Երիտասարդ տղաների պատկերող մէկ այլ լուսանկարի մակագրութիւնն է. - «Ղարաբաղում մարտերը հայրենասիրական ալիքի են մղել երկու կողմերին: Կամաւորականները պատրաստ են մեկնել՝ կռուելու, ինչպէս այս երիտասարդ մարդիկ՝ Երեւանում»:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

Հնչակեան Կամաւորները Մեկնեցան Արցախ



Հնչակեան Կամաւորները Արցախ մեկնում են առաջ

Կիրակի, Ապրիլ 3-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ազատամարտիկներու յանձնախումբը յայտարարեց, որ այս Արցախ մեկնած են Արտաշատի ՍԴՀԿ «Ժիրայր-Մուրատ» մասնաճիւղի ազատամարտիկները՝ հրամանատար Խաչիկ Սարգսեանի գլխավորութեամբ: Երկրապահ Կամաւորական Միութեան տարբեր մասնաճիւղերու հետ Արցախ մեկնած են նաեւ ազատամարտի մաս-

նակից Մեծն Մուրատ Չոկատի մարտիկները՝ հրամանատար Ռազմիկ Մատարեանի գլխավորութեամբ: Ազատամարտիկներու յանձնախումբը այս առթիւ յայտարարեց որ, Հնչակեան կուսակցութիւնը իր ունեցած բոլոր հնարաւորութիւններով Արցախցիներու եւ Արցախի կողքին է եւ մեր Հայրենիքի ոչ մի թիգ հող թշնամին պիտի չյաջողի գրաւել:

ՍԴՀԿ Լիբանանի Վարիչ Մարմինի Յայտարարութիւնը

Մտահոգիչ իրավիճակ կը տիրէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան սահմանային հատուածներուն վրայ: Ապրիլ 1-2 լուսցող գիշերը, Ատրպէյճան հերթական անգամ խախտեց առկայ գինադադարը եւ փորձեց ներթափանցել հայկական հողերուն ուղղութեամբ, հարուածելով խաղաղ բնակավայրերը եւ լարուածութիւնը հասցնել աննախադէպ աստիճանի:

րուն, քաջ հաւատարմով, որ առանց անոնց նուիրա կան կեցուածքին դժուար պիտի ըլլար պահպանել հերոսա կան Արցախն ու հայուն արժանապատուութիւնը:

Հայկական սահմանապահ ուժերը ինչպէս միշտ փայլուն կերպով կատարած են իրենց պարտականութիւնը թշնամիին հասցնելով ուղղակի հարուածներ:

Լիպոյս ենք, որ մեր բանակը իր արդար բազուկին շնորհիւ պիտի յաջողի խաղաղութիւն պարտադրել, ամրապնդել 1994-ին հաստատուած գինադադարը, դարաբաղեան հիմնախնդիրը վերադարձնելով քաղաքական բեմահարթակ: Մենք հաւատացողն ենք, որ Արցախի ճակատագիրը կը վճռուի միայն իր զաւակներու յաղթական կամքով եւ հիմնախնդիրը կարելի է լուծել բացառապէս քաղաքական ճանապարհով:

Առ այդ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը կը դատապարտէ հակառակորդի հերթական սարսափը եւ իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ հայրենի պետութեան ու ժողովուրդին:

Ինչպէս երէկ, այսօր եւս ՍԴՀԿ-ի Լիբանանի ընտանիքը պատրաստ է բոլոր մակարդակներու վրայ նեցուկ կանգնելու հերոսական սխրանքներով անկախացած Արցախին ու անոր պայքարունակ ժողովուրդին:

Մեր զօրակցութիւնը կը յայտնենք յատկապէս սահմանին վրայ արեան գնով հայրենի հողը պաշտպանող մեր քաջարի զինուորներ-

ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմին

Միացեալ Յայտարարութիւն

Շարունակուած էջ 1-էն

ներու, շփման գիծի ամբողջ երկարութեան, թիրախ դարձնելով ոչ միայն Հայկական Պաշտպանութեան Բանակը, այլ նաեւ պարզ քաղաքացիները:

Անցնող մի քանի ամիսներու ընթացքին մենք բազմիցս յայտնեցինք մեր մտահոգութիւնը՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի սահմաններուն վրայ Ատրպէյճանի կողմէ կատարուող գինադադարի խախտումներուն վերաբերեալ: Միացեալ Նահանգները եւ Ֆրանսան, երկուքն ալ լուռ մնացին, Միասկի խումբի ծիրէն ներս եւ դուրս, փոխանակ դատապարտելու Ազերի բռնապետութեան անտեսումը միջազգային հանրութեան նպատակներուն՝ տարածաշրջանէն ներս խաղաղութեան պահպանման ուղղութեամբ:

Որպէսզի կարելի դառնայ առաջը առնել ապագայ զարգացումներուն, ԵԱՀԽ Միասկի խումբը, գլխավորութեամբ Միացեալ Նահանգներուն եւ Ֆրանսայի, պարտին վերջ տալ երկու կողմերուն զսպուածութիւն ցուցաբերելու մասին սովորական դարձած յայտարարութիւններէն ու խստագոյնս դատապարտեն Ատրպէյճանական բանակի կողմէ սկսած բացայայտ նախադրձակումը: Միայն այն ժամանակ, երբ դադրի Ազերիներու յարձակումը, ԵԱՀԽ Միասկի խումբը պէտք է դիմէ, քայլերու,

Մատաղիսի մարտերուն մեծ կորուստներ են ունեցել Թուրքիայից եկած զինեալները



Թշնամին իր մեծելները ձգելով ետին դիմած է փախուստի

Մատաղիսի ուղղութեամբ ապրիլի 4-ին տեղի ունեցած ծանր մարտերում հակառակորդի կողմում խուճապ է սկսուել եւ նրանք դիակներ թողնելով դիմել են փախուստի: Այս մասին Արցախից հաղորդում է «Հետքի» խմբագիր Էդիկ Բաղդասարեանը՝ յաւելելով, որ իրականութեանը չեն համապատասխանում ատրպէյճանական մամուլի տեղեկութիւնները, թե իրենք գրաւել են Մատաղիսը: 5

տասխան է տուել: Հրետանաւորները մանրամասն «ծեծել» են հակառակորդին, ինչպէս սպաներից մէկն ասաց», - նշել է նա:

«Երէկ այդ հատուածում ծանր մարտեր էին: Ատրպէյճանական զինուժն իր ունեցած զրեթէ ողջ զինտեսականին օգտագործել է նաեւ այդ ուղղութեամբ: Ցաօք, ունեցել ենք զոհեր, երէկ ՊԲ-ն նրանց մասին հաղորդել է: Ատրպէյճանական զինուժի ներկայացուցիչները ենթադրել են, թե դրանից յետոյ հայկական ուժերը նահանջելու են եւ իրենք յաղթական մտնելու են Մատաղիս: Բայց լրիւ հակառակն է եղել, այդ գնդակոծութիւններից, հրետակոծութիւններից յետոյ հայկական զինուժը համարժէք պատասխան է տուել: Հրետանաւորները մանրամասն «ծեծել» են հակառակորդին, ինչպէս սպաներից մէկն ասաց», - նշել է նա:

Բաղդասարեանի խօսքով՝ փախուստը հակառակորդի կողմում է սկսուել. «Նորից դիակներ են թողել ռազմի դաշտում: Այսօր կը փորձենք նաեւ Ղարաբաղի իշխանութիւններից տեղեկութիւն ստանալ, թե ինչ է լինելու հակառակորդի դիակների հետ, արդեօք դրանք յանձնելու մասին բանակցութիւններ ընթանո՞ւմ են, կարմիր խաչի ներկայացուցիչները դիմէ՞լ են, արդեօք, կողմերին»: Ինչպէս արդեն յայտնել է Ղարաբաղի ՊՆ-նի ներկայացուցիչը? Հայկական կողմն ունի անհետ կորածներ: Պաշտպանութեան նախարարութեան տարբեր ներկայացուցիչներ սկսել են հաստատել, որ Ատրպէյճանի կողմից կռվում են թուրքիայից եկած զինեալներ եւ հենց նրանք են ունեցել մեծաթիւ կորուստներ, եւ խուճապ դրանից է սկսուել հակառակորդի մօտ», - ընդգծել է Բաղդասարեանը:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽՍՏՕՐԵՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ

Շարունակուած էջ 1-էն

Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութեան պատասխանատու մարմիններու կողմէ Արցախի հանրապետութեան անկախութեան ճանաչումը, տարածաշրջանի կայունութեան նպատակով:

4. Մեր պատրաստակամութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգներու նեցուկը ապահովելու? Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու ուղղութեամբ, հետեւելով Միացեալ Ազգերու ընդհանուր կանոնադրութեան:

5. Հայկական միասնական ուժերով այս սպառնալիքին դէմ կանգնելու մեր յանձնարարութիւնը, որուն միացաւ կը հրաւիրեմք համայնքիս բոլոր միութիւնները, յարանուանութիւնները, հասարակական կազմա-կերպութիւնները, իրաւանցիկ հայրերի:

Կը սգանք Հայոց Բանակի հերոս զինուորներու կորուստը: Անոնք մեր զաւակներն են, որոնց գիտակից մահատակութիւնը՝ մեզ առաւել գոհաբերութեամբ հայրենիքի պաշտպանութեան գործին նուիրուելու ներշնչման աղբիւր է:

Հայ ժողովուրդը իր հազարամեակներու վրայ երկարող պատմութեան ընթացքին իր գոյութեան սպառնացող բազմաթիւ վտանգներ դիմագրաւած է ու յաղթահարած: Այս մէկը դիմագրաւելու պատասխանատուութիւնը մեր ուսերուն է, բոլորի՞ս:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՍԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

որպէսզի վերականգնուի վստահութիւնը երկու կողմերուն միջեւ: Իսկ, այս նպատակին հասնելու ուղղութեամբ խիստ կարեւոր է որ, Լեռնային Ղարաբաղի ընտրուած ներկայացուցիչներու ներկայ գտնուելն բանակցութիւններու սեղանին շուրջ:

ՀԱՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ - ՓԱՐԻՉ
ՀԱՅ ԱՄԵՐԻԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ - ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

ԴԵՊԻ Ո՞ՒՐ ԿԵՐԹԱՅ ԹՈՒՐԲԻԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ

ՀԱՄԱՐԱԶՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Կը թուրի, թէ Թուրքիան ներկայիս, առանց որեւէ ուղղութեամբ, կը քալէ իր քաղաքականութեան փշոտ ճանապարհներուն մէջ:

Օսմանեան կայսրութիւնը գոյատեւեց հարիւր տարիներ, երբ օսմանեան կայսրը (խալիֆան) կայսրութեան քաղաքական եւ կրօնական պետն էր. իբրեւ իսլամներու խալիֆա, ունէ մահմետական չէր կրնար չհետեւիլ անոր:

Կայսրութեան փլուզումէն ետք, Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրք հիմնեց Թուրքիոյ Հանրապետութիւնը՝ 1923ին, եւ Թուրքիան աշխարհիկ պետութեան վերածեց. սակայն իր կատարած բոլոր փոփոխութիւնները չկրցան թուրք հասարակ խաւին մէջ արմատացած իսլամական սովորութիւնները ջնջել: Աթաթիւրք ուզեց իսլամներու խալիֆա ըլլալու բեռը Թուրքիոյ ուսերէն վար առնել, հետեւաբար՝ թիկունք դարձուց Մեքքէին՝ իսլամական սրբավայրին, հայեացքը դէպի Արեւմուտք ուղղելով: Իրեն յաջորդողները նոյն քաղաքականութեան հետեւելով՝ միշտ փորձեցին երկիրին եւրոպական զգեստ հագցնել... Ուստի, Թուրքիան Հիւսիսատլանտեան խաղաղութեան կազմակերպութեան (ՆԱՅՕ) անդամակցելով՝ մնայուն համոզումը ունեցաւ, թէ ինք իր դրացի երկիրներէն աւելի՝ զարգացած է եւ հզօր:

Քանի մը եւրոպական կազմակերպութիւններու անդամակցելէն ետք Թուրքիա դիմեց Եւրոպական խորհուրդի անդամակցութեան, սակայն իր անդամակցութիւնը յաճախ յետաձգուեցաւ եւ տակաւին կը յետաձգուի՝ քանի մը պայմաններու պատճառաւ. անոնցմէ մէկն է Հայոց Յեղասպանութեան ճանաչումը: Թուրքիոյ նախկին նախագահ Թուրկուլ Էրթողլու լաւ ըմբռնած էր անդամակցութեան յետաձգման բուն պատճառը եւ արտայայտուած էր այդ մասին՝ ըսելով. «Անոնք մեր անդամակցութիւնը չեն ուզեր, որովհետեւ մենք իսլամ ենք, իսկ իրենք՝ քրիստոնեայ, բայց այդպէս չեն արտայայտուիր»: Իսկապէ՛ս որ բուն հարցը քաղաքակրթութեան հակադրութիւնն է Թուրքիոյ եւ Եւրոպայի միջեւ, եւ պարզ է, որ եւրոպացիները Թուրքիան պիտի չընդունին իրենց շարքերուն մէջ:

Արդի Թուրքիան իսլամներու խալիֆա ըլլալ չուզեց եւ Մեքքայէն հեռացաւ Աթաթիւրքի օրերէն ի վեր, իսկ Եւրոպան ալ, իր կարգին, Թուրքիան իր շարքերուն մէջ չուզեց, եւ կը թուի, թէ երբե՛ք պիտի չուզէ: Պէտք էր, որ Թուրքիան ուրիշ ուղղութեամբ քալէր, հետեւաբար նոր ելք մը գտաւ՝ նախկին սովետական իսլամ երկիրները, որոնք Թուրքիոյ նման նոյն կրօնքը, լեզուն եւ մշակոյթը ունին. ուստի, լաւ պիտի ըլլար անոնց հետ միանալ եւ Թուրքիոյ հին երազները՝ Փանթուրանականութիւնը իրականացնել: Սակայն, բացի Ատրպէյճանէն, այդ երկիրներուն հետ կրօնական եւ մշակութային կապերէն աւելին չկրցաւ հաստատել. պարզապէ՛ս անոնք չուզեցին պարել Թուրքիոյ մեղեդիով: Իսկ Ռուսիան, միւս կողմէ, իր տնտեսական, ռազմավարական եւ այլ հին կապերը վերահաստատելով այդ երկիրներուն հետ՝ Թուրքիան ետ դարձուց իր սահմանները: Ներկայիս, ՆԱՅՕին համար

Թուրքիա ծանր բեռ մը եղած է. անիկա համամտութիւն ցոյց չտուաւ, երբ Թուրքիոյ կողմէ ռուսական պատերազմական օդանաւը վար առնուեցաւ, այլ ընդհակառակը՝ լուրեր տարածեց ըսելով, թէ ինք՝ ՆԱՅՕ, նեցուկ պիտի չկանգնի Թուրքիոյ, վերջինիս գլուխէն մղուած հակամարտութիւններուն պարագային:

Թուրքիոյ քաղաքականութիւնը նաեւ Սուրիոյ հանդէպ ձախողեցաւ, իսկ էրտողանի ու Տաւուսթոյլուի «Զերօ խնդիր» քաղաքականութիւնը արդէն վաղուց ջուր ինկաւ: Սակայն, Թուրքիոյ փառամուլ եւ յամառ նախագահ էրտողան տակաւին իր անձնական հաշիւները ունի. ան դեռ կը փորձէ վերականգնել օսմանական փառքերը եւ գորութիւնը: Խալիֆայութիւնը հաստատելուն նուիրուած 5000 հոգինոց ժողով մը՝ թրքական «Թահրիր» կուսակցութեան կազմակերպութեամբ, Անգարայի մէջ, երբեք անհանգստութիւն չէ պատճառած Թուրքիոյ աշխարհիկ պետութեան, որուն ղեկավարն է արմատական իսլամ էրտողան: Թուրքիան շատ օգտուեցաւ իր զաղտնի յարաբե-

րութիւններէն եւ տնտեսական կապերէն՝ շինծու «Իսլամական պետութեան» (ՏԱԷՇ) հետ: Անիկա երկար ժամանակէ ի վեր, «Իսլամական պետութեան» գրաւած հանքերէն արտադրուած քարիւղը շատ աժան գինով կը գնէ, իսկ իր կարգին, ՏԱԷՇին գէնք, ուտեստեղէն, բժշկական ծառայութիւններ եւ ամէն տեսակի կազմակերպչական աջակցութիւն կ'ապահովէ:


Բայց մինչեւ ե՞րբ...

Ռուսական աջակցութիւնը Սուրիոյ, Թուրքիոյ հաշիւները խանգարեց... Թուրքիոյ յարաբերութիւնները «Իսլամական պետութեան» հետ հեշտութեամբ չեն շարունակուիր... Քիւրտերը մղձաւանջ եղած են Թուրքիոյ համար. Քիւրտիստանի բանուորական կուսակցութեան անդամները կը շարունակեն իրենց պայքարը Թուրքիոյ պետութեան դէմ՝ օգնութիւն ստանալով այլ երկիրներէ՝ ըստ թրքական մամուլին: Նաեւ, Ամերիկան նեցուկ կը կանգնի Սուրիոյ քիւրտերուն, որոնք կը պատերազմին ՏԱԷՇի դէմ, բաւական լաւ դիրքեր գրաւելով, եւ այդ մէկը եւս անհանգստութիւն կը պատճառէ Թուրքիոյ: Վերջերս, Անգարայի եւ Պոլսոյ մէջ տեղի ունեցան քանի մը

պայթումներ, որոնք քիւրտերուն վերագրուեցան: Թուրքիոյ միակ բարեկամները իրաքի քիւրտերն են, որոնք տարիներէ ի վեր կ'թան կող եղած են Թուրքիոյ համար, սակայն անոնք եւս անանկացան՝ Պաղատտի կառավարութեան նման:

Այս բոլոր դռները փակուելէն ետք, Թուրքիան վերագրած է իր հին հաշիւներուն. էրտողան ջանք կը թափէ արաբներուն հետ համագործակցելու, սակայն ո՞ւր են անոնք... Սուրիա եւ իրաք Պարսկաստանի հետ կը համագործակցին. Եգիպտոս կը հալածէ «Իսլամ եղբայրները» («Իխուան»), որոնք եւս էրտողանի գաղափարակիցներն են: Լիպիա եւ Թունուզ ՏԱԷՇի դէմ կը կռուին, իսկ Սէուտի Արաբիա եւ Մոցի էմիրութիւնները ո՛չ Թուրքիայէն, ո՛չ ալ Պարսկաստանէն կ'ախորժին. անոնք Ամերիկայի եւ Եւրոպայի աջակցութեան կը ձգտին: Աւելին, Թուրքերը սիւննի իսլամներ են՝ «Հանաֆի» վարդապետութեան հետեւորդներ եւ «Իխուան»ներու շատ մօտ գաղափարակիցներ, իսկ Սէուտի Արաբիան եւ Քաթարը «Ուահապ»ի ծայրայեղ իսլամներ են, եւ Թուրքիոյ հետ միատեղ՝ շրջանի

Շար.ը էջ 18



On the occasion of the 101st Commemoration of the Armenian Genocide
ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS
In collaboration with
PAN ARMENIAN ORGANIZATIONS
Presents

HRANT DINK ORATORIO
Guest of Honor **Rakel Dink**

Composer: **Majag Toshigian**
Lyricist: **Bercuhi Berberyan**

PAN ARMENIAN CHOIR & ORCHESTRA
Artistic & Choir Director: **STEPAN GOZUMIAN**
Music Director: **ARTASHES KARTALIAN**

Soloists
Soprano **ALENOUSH YEGHAZAR**
Soprano **NADIMA AVAKIAN**
Tenor **RAFFI KERBABIAN**

Saturday, April 16, 2016 at 7:30pm
AMBASSADOR AUDITORIUM
131 S, Saint John Ave. Pasadena, CA 91105
For more information & Tickets, Contact **(818) 342-0110**

www.itsmyseat.com
Abril Bookstore (818) 243-4112
Sardarabad Bookstore (818) 500-0790
Berj Bookstore (818) 244-3830
bolsahye1976@gmail.com

Dedicated to the Legacy of Hrant Dink

«ՅԵՌՈՒ ԿԵՑԷՔ ԴՈՒՔ ՎԱԽԿՈՏՆԵՐ...» (ԱՅՆԹԱՊԻ 314-ՕՐԵԱՅ ՅԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

ԱԻԵՏԻՍ ՈՒԱԶՄԻԿ

Յօղուած ին խորագիրը առնուած է Այնթապի հերոսամարտի զինեթզէն (հեղինակ՝ Յարութիւն Աղայեան), որ նաեւ փորագրուած է Հայաստանի Նոր Այնթապ գիւղին մէջ կանգնած յուշարձանին հարթութեան վրայ: Այն պահուն, երբ Մեծ Եղեռնէն ետք Կիլիկիա վերադարձած հայութեան վերապրող հատուածները տարբեր ոստաններու մէջ յաջորդաբար կ'իջնային քեմալական հորդաներուն դիմաց (Զէյթուն, Մարաշ, Հաճըն), Այնթապի մէջ դէպքերը կը զարգանային բոլորովին այլ ուղղութեամբ:

Հայկական հերոսամարտերու շարքին Այնթապի ինքնապաշտպանութիւնը կը յատկանշուի իր բազում ուսանելի երեսներով, սակայն, անհասկնալիօրէն ամենաքիչը շեփորահարուածն է անիկա:

Հետեւելով 1 Ապրիլ 1920-էն սկսած եւ 8 Փետրուար 1921-ին յաղթականօրէն աւարտած այնթապահայութեան գոյամարտին մանրամասնութեանց, կարելի է ապշիլ, թէ ինչպիսի ռազմական հմտու-



թեամբ, գերազանց կազմակերպուածութեամբ եւ միասնական ոգիով Սուրիոյ անապատներէն աքսորադարձ հայութիւնը մէկ մարդունման կերտեց մեր պատմութեան ամենափայլուն եւ ամենաօրինակելի էջերէն մէկը:

Կիլիկիոյ արեւելքը գտնուող մեծագոյն քաղաքն է Այնթապ:

Հայեր հոն բնակած են հնագոյն շրջաններէն: Քաղաքը հետզհետէ դարձած է մշակութային, կրթական կարեւոր կեդրոն: Առեւտուրի եւ արհեստագործութեան կողքին ունեցած է ազգային-եկեղեցական եռուն կեանք: Բազմաթիւ ակնառու դէմքեր տուած է քաղաքը եւ յատկապէս 1850-էն ետք բուռն վերելք ապրած է կրթական կեանքը, որուն համար ալ օտարներ կոչած են «Կիլիկիոյ Աթէնքը»:

Մեծ Եղեռնի վաղորդային, շուրջ 30 հազար հայեր կ'ապրէին Այնթապ: Թուրքեր ատելամարդ անհանդուրժողականութեամբ կը հետեւէին հայոց մտաւոր մշակոյթի յառաջընթացին:

Նոյն 1869-էն կը գործէր Հայկանուշեան աղջկանց գիշերօթիկ դպրոցը: Կային 13 վարժարաններ,

լսարան-գրադարաններ, վարդանեան մատենադարանը, մշակութային, մարզական թատերական, երաժշտական խումբեր: Նշանաւոր էր 1880-ին բացուած Այնթապի Կեդրոնական Գոլէճը՝ բժշկական բաժինով: Հայոց գիրերու գիւտին 1500-ամեակին եւ տպագրութեան 400-ամեակին առիթով 1913-ին բացուած կատարուեցաւ բարձրագոյն կրթական հաստատութեան՝ Կիլիկեան ձեմարանին, որուն առաջելութիւնն էր ուսուցիչներ եւ մտաւորականներ պատրաստել ողջ հայութեան:

Ամէն ինչ շրջեցաւ 1915-ի անհեղ տարին, երբ այնթապահայեր եւս բռնեցին գաղթի ու տարագրութեան ճամբան: Աւելի ուշ, Մուտրոսի գինադարէն ետք, կիլիկիահայութեան հետ անոնք եւս վերադարձան բնօրրան՝ 1919 Յունւարին: Աւելի քան 10 հազար այնթապահայեր եւ 8000 սեբաստահայեր մեկտեղուեցան հոն. «Կիսաքանդ տուններ շինեցան եւ նորոգուեցան, հայ արհեստաւորներ եւ վաճառականներ անմիջապէս գործի լծուեցան: Խաղաղութեան եւ երջանկութեան ժամանակամիջոց մը տնականօրէն վայելել կը յուսային այդ անապատներէն հաւաքուած եւ սուրի ու հուրի արհաւիրքէն մազապուրծ ազատուած տարաբախտ հայերը » կը գրէ Այնթապի պատմագիր Գէորգ Սարաֆեան:

Կիլիկիա նախ կը գտնուէր անգլիացիներու իշխանութեան տակ, ապա դիւանագիտական խարդաւանքներու հետեւանքով հաստատուեցան ֆրանսացիք՝ իրենց ռազմական ուժով: Հակառակ յուսադրիչ խոստումներու, այնթապահայեր, երեւի փորձառութենէ մղուած կը նախապատրաստուէին աւելի դժիւմ օրերու: Թուրքին ներկայութիւնը եւ հետզհետէ ծաւալող քեմալական շարժումը մտահոգիչ նախանշաններ էին անկասկած:

Անոնք հեռատեսութիւնը ունեցան խաղաղ օրերուն ձեռնածալ չմնալու եւ Հալէպէն գաղտագողի զէնքեր փոխադրեցին Այնթապ՝ առի նախապատրաստութիւն: 1920 Յունուարին Մարաշի շարժին լուրերը սթափութեան հրաւիրեցին գանոնք: Կազմուեցաւ ինքնապաշտպանութիւնը վարող մարմին մը Հայոց Ազգային Միութեան նախագահ Տէր Ներսէս Ա. Քհնյ. Թաւուքճեանի, Զինուորական Կեդրոնական Մարմինի անդամներ Ատուր Լեւոնեանի եւ Աւետիս Գալեմքեարեանի ղեկավարութեամբ: Հայոց Ազգային Միութիւնը կազմուած էր երեք հայ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներէ եւ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներէ եւ վաւերացուած ֆրանսական իշխանութեանց կողմէ:

Այնթապի հերոսական ինքնապաշտպանութեան կազմակերպուածութիւնը, քաղաքական ու ռազմական հմուտ գործողութիւնները եւ վերջապէս փայլուն աւարտը կը պարտինք հերոսամարտին Ղեւոնդ Երէց՝ Տ. Ներսէս Ա. Քահանային, գինուորական հմուտ գործիչ 26-ամեայ Ա. Լեւոնեանին (Ատուր Փաշա) եւ ռումբեր պատրաստող ու մարտական գործողութիւններ ղեկավարող Ա. Գալեմքեարեանին: Ասոնց կողքին ստեղծուեցան ինքնապաշտպանութիւնը կազմակերպող մարմիններ՝ պարէնաւորման,



քաղաքապետական, քաղաքային եւ գինուորական դատարաններ, առողջապահական սպասարկութիւն, հրշէջներ, ոստիկանական խորհուրդ եւ այլն:

Հայ-թուրք բախումները կը սկսին 1 Ապրիլին: Ինքնապաշտպանութեան մարմինին ենթակայ ամրաշէն երիտասարդներ անմիջապէս պատնէշներ կը կանգնեցնեն հայկական թաղամասերու երկայնքին. գինեալ պատրաստ խմբակներ կ'ամրանան նախատեսուած դիրքերուն: Հայութեան բոլոր հատուածները կը լծուին գործի: «Հերոսամարտը հերոսամարտ ընդունելը լոկ հայ գինուորականներ չէին, այլ ամբողջ Այնթապի հայութիւնը, պատնէշներէն հեռու, ամէն գոհողութեան պատրաստ:

Հայ կիներ եւ դեռատի օրի-

որդներ քար ու աղիւս կրեցին հայկական դիրքերն ամրացնելու համար: Արհեստաւորներն իրենց նպաստը բերին պարէնաւորման գործին: Աշնան ընթացքին հայ երիտասարդներ քաղաքէն դուրս ապրելով՝ այգիներէն ու պարտէզներէն միրգեր բերին հայոց ձմրան պաշարը պարարտացնելու: Կուսակցականները կատարեալ համերաշխութեամբ, հարուստները առատաձեռնութեամբ, մտաւորականները իրենց գրիչով ու խրատական խօսքերով, հասարակ



ժողովուրդը գինուորական կարգապահութեամբ վերջնական յաղթութեան համար բերին իրենց նպաստը».- կը գրէ պատմագիրը: Հայկական ռազմագիծը կը

Շարք էջ 19

Մեծ եղեռնի 100+1-րդ տարելիցի առթիւ
In commemoration of the
100+1 ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE
Organized by
Gaizd Youth Organization, Armenian Athletic Association (Homenmen) & ACA San Gabriel Chapter

ՀՍԿՈՒՄ
COMMEMORATING
THE
ARMENIAN GENOCIDE
Saturday
Շաբաթ
April 23, 2016
Ապրիլ 23, 2016
MEMORIAL PARK
PASADENA
85 East Holly Street Pasadena, CA 91101
Starting at 7:00 pm

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ 110ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՍԵՄԻՆ

ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը 110 տարիներու ընթացքին անշահախնդիր նուիրումով ծառայեց Հայ ժողովուրդի գերագոյն շահերու պահպանման ու մայր հայրենիքի բարգաւաճման համար: Ներկայ ժամանակներու դժուարին պայմաններու-պահանջներու ճնշումին տակ կը յուսանք, որ մեր ազնուասիրտ ժողովուրդը իր անվերապահ նեցուկ-օժանդակութիւնը չզլանայ մեր մեծ Միութեան՝ որպէսզի ան կարենայ դիմագրաւել գալիք բոլոր մարտահրաւէրները, ինքնավստահօրէն շարունակէ ծառայել մեր ժողովուրդին, ի մասնաւորի երիտասարդութեան հզօրացման՝ դարեր շարունակ:

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը վաղանցիկ կառույց մը չէ, պայմանաւորուած անձերով կամ հատուածային տեսակէտներով. անիկա աւելի վսեմ մարմնացումն է ազգային գերագոյն ծառայութեանը գտուած, բիւրեղացած-սահմանուած գոյատեւելու»:

Տեղին է յիշել, թէ Նախագահ Պերճ Սեդրակեան խոհուն իմաստութեամբ, ճարտարօրէն կը շարունակէ՝ Նախագահներ Պօղոս Նուպարի, Ալեք Մանուկեանի սրբազան առաքելութիւնը:

ՀԲԸՄիութեան հիմնադրութեան նպատակն էր «Հայ ժողովուրդի, մասնաւորաբար արեւմտահայութեան կարիքներուն բաւարարումը, Հայաստանի (Տաճկահայաստանի) ազատագրումը թրքական տիրապետութենէն»: Նախագահ Սեդրակեան «Դար մը Պատմութիւն ՀԲԸ Միութեան» գիրքի նախաբանին մէջ կ'ըսէ հետեւեալը. «Միութեան կանոնագիրը կը նախատեսէր ստեղծումը անձեռնմխելի դրամագլուխի մը կազմուած ստոյգ նպատակի համար կատարուած նուիրատուութիւններէ, որոնց վրայ պիտի աւելնային անդամավճարներ, այլ մուտքեր»:

Նախագահ Պերճ Սեդրակեան արդարացիօրէն կը շեշտէ, թէ արտասահմանի մէջ կազմակերպութեան մը յաջողութիւնը, բարգաւաճումը կ'ապահովուի իր նիւթականով, անդամներով: Անդամներն են, որոնք կ'արժեւորեն, կ'իմաստաւորեն միութեան մը գոյութեան իմաստը: ՀԲԸ Միութեան կանոնագիրի յօդուած IIIը կը վերաբերի անդամակցութեան, որ հիմնական - կարեւորագոյն առաջին երեք հատուածներէն մէկն է: Առաջինը՝ ըլլալով Միութեան անունը, երկրորդը՝ Նպատակը, իսկ երրորդը՝ Անդամակցութիւնը: Այստեղ անհրաճեշտ է ի մտի ունենալ այն ասացուածքը, թէ «Առանց գինուորի՝ բանակ կարելի չէ ունենալ»:

Ի միջի այլոց հարկ է շեշտել, թէ յետ Եղեռնի «արեւմտահայութիւն» կը նշանակէ արտասահման, որ կը պարփակէ այսօրուան անկախ Հայաստանէն դուրս գտնուող գաղութները՝ ներառեալ Ռուսաստանը:

Ներկայ պայմաններով, հայրենի կառավարութեան պարտաւորութիւնն է ապահովել հայրենի ժողովուրդի բարգաւաճումն ու գոյատեւումը: ՀԲԸ Միութեան,

Հայ եկեղեցուց, ազգային կազմակերպութիւններուն առաջնահերթ պարտաւորութիւնն է արտասահմանի մէջ ապահովել ազգապահպանումը իր եկեղեցիներով, դպրոցներով, մշակութային, ընկերային ձեռնարկներով, ինչպէս նաեւ մարզական, սկստական - երիտասարդական արդիական գործունէութիւններով: Քաղաքակիրթ երկիրներ միլիառներ կը ծախսեն վերոյիշեալ գործունէութիւններով դաստիարակելու համար նոր սերունդները:

Անհրաժեշտ է, որ մենք ալ միջակութենէ բարձրանանք, որպէսզի արդիական միջոցներով եւ գործելակերպով կարենանք դաստիարակել, խանդավառել եւ հրա-

պուրել մեր նոր սերունդները՝ պահպանելու համար մեր մշակութային հարուստ ժառանգութիւնը, կերտելով անոնց մէջ ազգային ինքնութեան հպարտ գիտակցութիւնը:

Նախագահ Սեդրակեան կը յայտարարէ հետեւեալը. «Անհրաժեշտ է որ ուսումնասիրուին նպատակասլաց ծրագիրներ եւ գործադրուին բարձրորակ յայտագիրներ, որոնք կ'ամրապնդեն կապը՝ օտար երկնակամարներու տակ հասակ նետող սերունդներուն եւ անոնց հայրենաբնակ սերնդակից հարազատներուն միջեւ, ինչպէս ՀԲԸՄի հայկական համացանցային համալսարանը, ասպարէզային միջազգային ծրագիրները եւ այլն»:

Հայրենիքը՝ իբր անկախ պետականութիւն, պէտք է գործնականապէս գորավիզ կանգնի արտասահմանի իր հայրենակիցներուն,

եթէ կ'ակնկալէ, որ գալիք սերունդներն ալ օժանդակեն հայրենիքի բարգաւաճման:

Ինչպէս ծանօթ է բոլորիս, ՀԲԸ Միութիւնը հիմնուած է 1906ին արտասահմանի մէջ, Եգիպտոս: Իր առաջնահերթ պարտաւորութիւնը եղած է ծառայել արտասահմանի գաղութներուն՝ որպէսզի գաղութներն ալ իրենց կարգին, մեր Միութեան նման, կարելի եղած չափով օգտակար դառնան հայրենի ժողովուրդին եւ օժանդակեն հայրենիքի բարգաւաճման՝ քանզի զօրաւոր արտասահմանը գրաւականն է հայրենիքի հզօրացման: Պատմութեան առջեւ պատասխանատու պիտի ըլլանք, եթէ անտեսենք արտասահմանի կարեւորութիւնը: Նաեւ կարելի չէ մոռնալ արտասահման ապրող նոր

Շար.ը էջ 18

LAS VEGAS Armenian Genocide RALLY FOR JUSTICE 2016

ARMENIAN GENOCIDE COMMEMORATION

SATURDAY, APRIL 23, 2016 - 6:30 PM
CANDLE LIGHT VIGIL
SUNSET PARK - ARMENIAN GENOCIDE MEMORIAL MONUMENT
2601 E. Sunset Road, Las Vegas, NV 89120
 (Use Park Entrance on Sunset Road, across from Enterprise Car Rental)

SUNDAY, APRIL 24, 2016 - 2: COMMEMORATION
Մեր Տէրը Յիսուս երբ իր աշակերտները կը կանչէր իր աստուածային ներթափանց նայուածքով, տեսաւ Նաթանայէլը, որ կոչուեցաւ Բարթողիմէոս, Հայաստանի Առաքեալը, ու զինք կոչեց այր մը որ նենգութիւն չկար մէջը: Եւ երբ Նաթանայէլ հարցուց Յիսուսի թէ ինչպէս կը ճանչնար զինք, Տէրը ըսաւ թէ երբ թգնի ծառին տակ նստած էիր, տեսայ քեզ, եւ Փրկչապոսի միջոցաւ քեզ մօտս բերի: Ահա Աւետարանական պարզ կոչում մը որ համեստօրէն պիտի չվարանիմ վերագրել Սիրելի Եղիշէ Արքեպիսկոպոս Կիրիլեանին զինք այնքան մօտէն ճանչցած ըլլալու բարեբախտութեամբ: Համեստութիւնը եղաւ իր բարձրութիւնը եւ այդ կը բաւէր հոգեւոր երիտասարդ հայրերին որ հոգեկան իրձերը զարգացնելով հասնէր բարձրագոյն աստիճանի՝ արքեպիսկոպոսութեան, մնալով միշտ համեստ, բարի, հոգեւոր եւ պարտաճանաչ Հայ հոգեւորականը «յորում ոչ գոյն նենգութիւն»:

Ծանօթութիւնս Երջանկայիշատակ Սրբազան Հօր յետ կ'երթայ ետ ուղիղ 66 տարիներ, 1949-ի Սեպտեմբերին, երբ նոր մուտք գործած էի Անթիլիասի ժառանգաւորաց Գ. Դասարանը, ուր նաեւ աշակերտեցանք նաեւ իրեն՝ նորընծայ Եղիշէ Հայր Սուրբին, երիտասարդ, գեղադէմ, պարտաճանաչ, որմէ մեր առաջին դասը սորվեցանք Հայ Եկեղեցւոյ Պատմութեան եւ Միսագիտութեան մասին: Երկու տարի ետք, Գարեգին Ա. Յովսէփեանց մեծանուն Կաթողիկոսի Հայրապետական կարգադրութեամբ մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, ուր որպէս բարի հովիւ ծառայեց Արեւելեան Թեմի շաբաթ մը համայնքներուն, միակն ըլլալով անդադրում ծառայելու կարեւոր թիւով եւ որակով, մեծ ու փոքր, ծուխերու: Գրեթէ ամէն համայնք վայելեց Եղիշէ Հայր Սուրբի հոգե-

Շաբ.ը էջ 19

ՈՉ ԵՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԱՐ ՏՕՔԹ. ՌԻՉՐԻՏ ԳԱՄԱՐԸ

Ապրիլի 2ին, 2016 թ. Գալիֆորնիոյ Նիու Փորթ Պիչ քաղաքին մէջ իր մահականացուն կնքեց ամերկահայ հանրածանօթ ակնաբուժ եւ ազգային բարերար Տօքթ. Ռիչըրտ Գասպար:



Բուն անունով Տիգրան Գասպարեան՝ ծնած էր 1919 Օգոստոսի 20ին Ֆրեզնօ: Երջանաւարտ է Գալիֆորնիոյ Համալսարանի ակնաբուժական ուսումնարանէն (USC): Քորէայի պատերազմին պատճառով մեկնած է ծայրագոյն արեւելք ու շրջան մը ակնաբուժութեամբ զբաղուած է ԱՄՆի բանակայիններուն մօտ: Նոյնպիսի առաքելութեամբ մը աշխատած է նաեւ Ճապոնի մէջ: Գալիֆորնիա վերադառնալով իր ուրոյն ակնաբուժական դարմանատունը բանալով հոն գործած է 35 տարի: Այնուհետեւ նոյն վայրին մէջ 15 տարի աշխատած է որպէս այցելու բժիշկ: Ընտրուած է Լոս Անճելոսի Ակնաբուժներու Միութեան նախագահ:

1986ին Հայաստան այցելելով մէկ շաբաթ շարունակ աչքի գործողութիւններ կատարած է Երեւանի ակնաբուժութեան Հիւանդանոցին մէջ, մեծապէս օգտակար հանդիսանալով թէ հիւանդներուն թէ մանաւանդ երիտասարդ ակնաբուժներուն, որոնք օգտուած են իր հարուստ փորձառութենէն, յատկապէս աչքի վիրաբուժութեան մարզին մէջ:

Հայրենիքէն վերադարձին Տօքթ. Ռ. Գասպար բժիշկ Վարդգէս Նաճարեանի հետ կը հիմնէ բժշկական սարքեր Հայաստանի (Medical Outreach for Armenia) կազմակերպութիւնը, որ յետագային բազմաթիւ անգամներ բժշկական սարքաւորումներ առաքած է դէպի Հայաստան:

Հանգուցեալը բառին իսկական առումով եղած է նաեւ հոգեւոր անձ մը: Մօտէն սերտած է Աստուածաշունչը եւ եկեղեցիներու առընթեր մասնակցած է սուրբ գրային դասախօսութիւններու: Ելոյթներ ունեցած է կրօնական լսարաններու մէջ եւ հանդէս եկած աւետարանիչներու գործերու մեկնաբանութիւններով ու զանոնք հրատարակած հայերէն եւ անգլերէն լեզուներով ու խտասալիկներով: Այս կապակցութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան բարձր գնահատելով իր եկեղեցանուէր եւ հայրենանուէր ծառայութիւններն ու բարեգոր-

ծութիւնները զինք դասած է ազգային բարերարներու շարքին:

1992ին իր նախաձեռնութեամբ հիմնուած է Հայ Ակնաբուժութեան Ծրագիրը: Ոչ հասութեամբ կարեւոր կազմակերպութիւն մը, որ կը նպատակադրէ դարմանել աչքի հիւանդութեամբ տառապողները, որոնցմէ շատեր յաճախ ողբերգական վիճակներու մատնուած են: Այս մարդասիրական օգտաշատ ընկերակցութիւնը շուտով ուճացաւ եւ անոր կազմակերպման մէջ երախտաշատ աշխատանք տարաւ բժիշկ Ռաճեր Օհաննէսեանը:

Իր գոյութեան շուրջ քառրոգ դարու պատմութեան ընթացքին Հայ Ակնաբուժութեան Ծրագիրը (Armenian Eye Care Project) արդէն մեծ իրագործումներ կատարած է յատկապէս Հայաստանի մէջ: Արդարեւ այս կազմակերպութեան կէս միլիոն տոլար արժող շրջուն հիւանդանոց-ինքնաշարժ օժտուած է արդիական ամենավերջին սարքաւորումներով: Ան Հայաստանի գիւղական շրջաններն այցելելով կը դարմանէ բազմահարիւր հիւանդներ, մինչեւ իսկ կը կատարէ աչքի տարբեր տեսակի գործողութիւններ, միշտ համագործակցելով Հայաստանի առողջապահութեան նախարարութեան եւ Ս. Մալայեանի անուան աչքի հիւանդանոցին հետ:

Տօքթ. Ռ. Գասպարի մահով հայ բժշկութիւնն ու ակնաբուժութիւնը կոսնցուց օրինակելի կեանք մը ապրած տիպար բժիշկ մը, որ իր պարտաւորութիւնները լրիւ կատարեց հայրենիքին, եկեղեցիին եւ մարդկութեան հանդէպ:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Գ. ՄՈՒՈՅԵԱՆ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԼԾՈՒԱԾ...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ժամադրութեան ժամից ընդհանուր անցել էր, հագուարդէպ եմ ուշանում ժամադրութիւնից, երբ Համոյնց դուան գանգը սեղմեցի, յետ միջօրէի չորսից անց էր, արեւը թեքուել էր դէպի արեւմտեան կողմը, մեղմ ջերմութիւն էր արձակում: Դեռ չբացուած դուան մօտ կանգնած շուրջս եմ դիտում, Գլխոքս պողոտայի դէպի արեւելք ընթացող նախքան վերջաւորութիւն, երկու կողմերը առանձնատներ ծառ ու ծաղիկով, հանգստաւէտ ու խաղաղ միջավայր: Դուռը բացուեց, Համոն էր, խօսքս նրան ուղղելով.

-Համո՛, հոյակապ տեղ ես ապրում քո այս գեղեցիկ շէնքով, այս համեմատաբար բարձունքում:

Նա անակնկալի եկած միայն ժպտաց, ես վերագրեցի այդ որպէս համեստութեան նշան, արդարեւ համեստութիւնը հոգեկան դրսեւորում, բնաւորութեան եւ խառնուածքի թանկագին գարդ է, որից մարդս չի տուժի, այլ առաւել կ'արժեւորուի եւ կը բարձրանայ:

Համոյի հետ ծանօթութիւնս սկսուել է իր կազմակերպած նկարչական ցուցահանդէսից: Նա տարեց մէկն է, ուշ տարիքում է սկսել նկարել, բայց փոքրուց սէր է ունեցել անթեղուած: Նա թէ՛ նկարում եւ թէ՛ սովորում է, հետաքրքիր աշխատասէր եւ հետեւողական մարդ, դեռ այդ տարիքում ունակ սովորելու եւ ստեղծագործելու: Նա 90 նկարներով ցուցահանդէս էր կազմակերպել սրահի չորս պատերը բազմերանգ ու բազմաբնոյթ իւղանկարներով զարդարել: Նա գոհունակութեամբ ասում էր.

-Իմ տարիքս յայտնող նկարներ եմ ցուցադրութեան դրել, դեռ յիսուն կտաւ՝ նկարներս պահեստանոցում են:

Նա կեանքի վերջին տասը տարիներումն է նկարել, նրանից առաջ իր կարեւոր սեփական գործն է ունեցել մեծ թւով գործաւորներ աշխատացնելով: Նա պատանի տարիքից արհեստի է հետեւում եւ հետեւողական աշխատանքով ու ճիշտ ծրագրաւորումներով գործը բարգաւաճում եւ ընդարձակում է շէնքերի օդափոխութեան կապուող սարքաւորումներ արդիւնաբերելով, որի շնորհիւ ճանաչողութիւն է վաստակում իրանի արդիւնաբերութեան բնագաւառում:

Համոյի տանը գտնուելուս երկրորդ անգամն է իմ գրքի շապիկի նկարի հարցով: Նրա կինը՝ տիկ. Յասմիկն յարգալից եւ ժպտուններն էին ինձ ընդունում է, տեղ եմ գրաւում սեղանի շուրջը: Թէյում ենք եւ տիկ. Յասմիկի տնային թիւում քը վայելում, գրոցի ընթացքում հետեւութիւն է արւում՝ «Արեւավառ իմ երկիր» գրքում տպուած «Բախտաւոր մարդ»-ու պատմութեան շուրջ: Մարդը, որը ճամբի տեսուչ-ոստիկանի կողմից ստուգման եւ հետապնդման ենթարկուելով կտակուած շոշափելի գումարի է համուած: Առ այդ Տիկ. Յասմիկը կեանքի իրողութեան մի դրուագ է յիշում, նա իր յիշողութեան ճշմարտացոլութիւնը հաստատելու համար դիմում է ամուսնուն.

-Յիշո՞ւմ ես Համո էն մեր բարեկամ Մելիքին, երբ մի քանի ամիս գտնուում էինք Անգլիայի Քամբրիջ քաղաքում, նա յաճախ մեզ էր այցելում եւ աշխատում էր այդ անձանօթ քաղաքում մեզ օգտակար լինել:

Նա անթարթ աչքերով նայեց

կնոջ կողմը միտքը սեւեռած ասելով.

-Ո՞ր Մելիքը:

-էն Մելիքը, որ Քամբրիջում ուսանող էր, ուշիմ ու աշխատասէր Մելիքը:

-Յովսէփի եւ Գոլխանումի տղա՞ն:

-Հա, դէ՛հ, դրան եմ ասում:

-Լա՛ւ, ասա՛, ինչ ես յիշում:

-Նա եկել էր մեզ այցելութեան եւ պատմեց իրեն պատահած դէպքը, թէ ինչպէս փոխարը (ճամբի տեսուչ ոստիկան) իրեն տուգանել էր:

Անտեղեակ եղելութիւնից սուս ու փուս իրենց խօսակցութեան եմ հետեւում, Համոն ցանկացաւ տուգանուելու պատմութիւնը իմանալ, ուստի նորէն հարց ուղղեց.

-Ի՞նչ պատճառով է նա տուգանուած:

-Փոխարը տուգանել էր խախտումի համար եւ մեղսագիր (ticket) տուել վճարելու:

-Այ կնի՛կ, կը ներես, որ լաւ էնմ յիշում, փոխարը ի՞նչ տեսակ խախտումի համար էր տուգանել:

Հետաքրքրութեամբ հետեւում եմ նրանց հարց ու պատասխաններին սպասելով աւարտին:

-Նա գիշերով հեծանիւ էր քշել առանց լուսաւորող ճրագների, փոխարը կանգնեցրել էր մեղսագիր յանձնել եւ պատուիրել էր հեծանիւը անպայման լոյսերով օժտել, ապա քայլելով առաջնորդել հեծանիւը առանց քշելու, քանի որ կարող է անախորժ դէպք պատահի: Սակայն փոխարը դրանով չէր բաւարարուել, գաղտնի հետեւել էր Մելիքին տեսնի իր պատուէրը կատարում է, թէ՛ ոչ: Մելիքը բոլորովին անտեղեակ փոխարի մտադրութիւնից հնազանդօրէն կատարում է նրա կարգադրութիւնը: Մի քանի օր դէպքից յետոյ Մելիքը նամակ է ստանում փոխարից, թէ. «Յարգելի պրն. Մելիք Վարդանեան, քանի որ իմ պատուէրս գիտակցօրէն կատարեցիր՝ ներում ես մեղսագիրը վճարելուց»:

Կարծես հոյակապ պատկերի առաջ հոգով վերանում ես արարող Մարտիրոս Սարեանի գործը դիտելուց, այդպիսի հոգեվիճակ պարուրեց ինձ ասելով.

-Ահաւասիկ յիրաւի ճամբի տեսուչ ոստիկան իր առաքելութեան լծուած քաղաքացիներին անվտանգութեան ու բարօրութեան համար սրտցաւօրէն ու արդարադատօրէն մտածող, որքան շատ այսպիսի ոստիկանների գոյութիւնը, այնքան աւելի կեանքն առողջ կը լինի՝ խաղաղ, անփորձանք, մարդը մարդու նկատմամբ յարգանքով ու վատահէլի:

Ձրոյցը այստեղ վերջ չգտաւ, այլ գնաց դէպի Հայաստան որոշ ոստիկանների արարքներից անարդար դէպքեր ու արարքներ յիշելով, այս վերջերս ինչպէս լսում եւ պատմում են՝ ոստիկանների գործունէութիւնը դէպի լաւն է գնում: Նկատի պիտի առնենք, որ ոստիկանը հասարակութեան մէջ դաստիարակի ուղղիչ դեր է կատարում, նա քաղաքացիների անվտանգութեան պաշտպանն է:

Երբ արդարութիւնը, սրտցաւութիւնը դերակատար լինեն ժողովրդի, երկրի եւ հայրենիքի, մեր ազգային արժէքների նկատմամբ, վստահօրէն երկիրը կ'առաջադիմի, արտագաղթը կանգ կ'առնի եւ հայրենադարձ կը սկսի, թող որ այդ յոյսերով սպրեւք այդ օրերի գալատեան, բայց ոչ ձեռնածալ, այլ՝ համատարած կառուցողական աշխատասիրութիւն եւ ձգտում մեր իրեալների իրականացման ճամբին:

ԶՍԿԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ



Շաբաթ, 19 Մարտ 2016ի առաւօտեան, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ դպրոցի աշակերտները տօնական ուրախ տրամադրութեամբ ժամանեցին դպրոց՝ իրենց ծնողներու ընկերակցութեամբ տօնելու Ս. Յարութեան տօնը:

Շաբաթօրեայ դպրոցի աշակերտները նախ ուղղուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Քահանայ հայրը փոքրիկներուն մատչելի լեզուով Ս. Զատիկուայ պատգամը տալէ ետք, բացատրեց հաղորդութեան իմաստն ու խորհուրդը, ապա շնորհաւորեց վարժարանի քառասուն աշակերտները, որոնք խոնարհ կեցուածքով, քաջ տիրացած ըլլալով մայրենիին, հիանալի կատարողութեամբ երգեցին շարականներ, կատարեցին զղջման արարողութիւնը եւ ստացան Ս. Հաղորդութիւնը:

Տօնակատարութիւնը շարունակուեցաւ դպրոցի սրահին մէջ, ուր մատուցուեցաւ ծնողներու կողմէ պատրաստուած համադամ խմորեղէններ եւ անուշեղէններ: Անոնց կողքին եղան Զատիկը խորհրդանշող ներկուած հակիթներով խաղեր, ապա փոքրիկները դիմաւորեցին հիւրաբար իրենց մէջ գտնուող նապաստակը՝ վայելելով անոր կենդանի ներկայութիւնը:

Բարձր տրամադրութիւն ու զատկական մտերմիկ մթնոլորտ տիրեց աշակերտներու, ծնողներու եւ ուսուցիչներու միջեւ՝ ամբողջ տօնակատարութեան ընթացքին:

Շաբաթօրեայ վարժարանը կը ծառայէ Ս. Գաբրիէլ հովիտի 5-13 տարեկան հայորդիներուն: Վարժարանի նորագոյն առաքելութիւններէն մէկն է քաջալերել իր ընթացաւարտները, որ իրենց ուսումը շարունակեն հայկական ամէնօրեայ վարժարանի մը մէջ ու ստանան լիակատար հայեցի դաստիարակութիւն: Ուստի, վարժարանը վերջին տարիներուն յաջողած է տասնեակ մը աշակերտներ ուղարկել հայկական ամէնօրեայ երկրորդական վարժարան:

Նշենք, թէ որպէս գաղութիս ամենահին շաբաթօրեայ վարժարաններէն մէկը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը ցարդ տուած է հարիւրաւոր շրջանաւարտներ ու կը պատրաստուի աշակերտական պատշաճ յայտագիրով ու ճաշկերոյթով մը 15 Մայիսին տօնել իր 50 ամեակը:

**Ն.Ս.Ս.Ս ԱՐՈՒԵՍԻ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**

Կը Կազմակերպէ

ԱՄՍՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Տարիքային Բոլոր Խումբերու Ըամար

Ղեկավարութեամբ՝

**Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող
Եւ Ըռուստալրագրող**

ՆՈՒՆԷ ԱԲԵՏԻՍԵԱՆԻ

**Փորձերը տեղի կ'ունենան ԸԿԲՄ-ի «Կարօ
Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave.
Pasadena .ca 91104**

Արձանագրութեան Ըամար Դիմել՝

Տիկ. Արմինէ Լաչինեանին Ըեռ. 626-372-4662

Պր. Յարութ Տրովիչօլեանին Ըեռ. 323-351-8001

ԵՐԶԱՆԻԿ ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ՅԱԶՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ 7 ԳԱՐՏՆԻՔ

1. Այսպիսի կիրնը միշտ երջանիկ եւ ուրախ է. Ե՛ւ երջանիկ ընտանիք, ե՛ւ յաջող աշխատանք ստեղծելու փափաք ունեցող կնոջ կեանքին մէջ տեղ չունին հիասթափուածութիւնն ու փոստանքը: Ոչ մէկը եւ ոչինչ կրնայ ետ պահել զինք իր կայացուցած որոշումէն:
2. Ան գիտէ, որ աշխարհի մէջ գոյութիւն ունի փոխհատուցման օրէնք. Օրինակ՝ եթէ ան կ'ուզէ նուէրներ եւ հաճելի անակնկալներ ստանալ իր ամուսինէն, ուրեմն ստանալ պէտք է փոխադարձ ըլլալ: Մենք սովորաբար կը ստանանք այն, ինչ կու տանք:
3. Նման կիրները գիտեն, որ իրենց բնաւորութեան բոլոր գիծերը ե՛ւ դրական, ե՛ւ ժխտական, օգտակար են իրենց համար. Այսպիսի կիրները շատ լաւ կը գիտակցին, որ անթերի մարդիկ չեն ըլլար եւ անհնար է պայքարել բնաւորութեան բոլոր ժխտական գիծերուն դէմ:
4. Նման կիրները երբեք չեն յոգնիր. Այսպիսի կիրները ուժի, ջիղերու, միտքերու մեծ պաշար ունին: Անոնց համար հանգստանալը այլ գործ մը ընելն է:

Անոնց ուժերը կը մարին միայն գիշերը: Իսկ օրուան ընթացքին անոնք նոյնիսկ ժամանակ կը գտնեն

- առանձին մնալու իրենք իրենց հետ:
5. Անոնք երբեք չեն քննադատեր. Այսպիսի կիրները շատ լաւ կը գիտակցին, որ պէտք է քննադատեն ու նուաաստացնեն միւսները: Անոնք միշտ կ'ընեն այն, ինչ կ'ուզեն՝ անկախ միւսներուն կարծիքէն: Եւ երբ կը զգան, որ ուժերը արդէն կը սպառին, 15 վայրկեան կ'արթնեն, ուժով կը լիցքաւորուին եւ կը շարունակեն իրենց գործունէութիւնը:
 6. Անոնք կը հասկնան, որ ոչ մէկը կրնան վերադաստիարակել: Վերադաստիարակել կը նշանակէ ուսուցիչ մէկուն ստիպել մտածել ու գործել այնպէս, ինչպէս դուք կ'ուզէք: Սակայն երջանիկ ընտանիք եւ յաջող աշխատանք ստեղծելու ցանկութիւն ունեցող կիրները կը հասկնան, որ ոչ մէկը կրնան վերադաստիարակել եւ ատիկա ուժերու եւ ժամանակի անտեղի կորուստ է:
 7. Անոնք ոչ մէկ բանէ կախելութիւն ունին. Այս կիրները միշտ կը յիշեն, որ կեանքը մէկ վայրկեանի մէջ կրնայ փոխուիլ: Ուստի, անոնք կ'առաջնորդուին միշտ բոլորին եւ ամէն ինչին երախտագիտութեամբ հրաժեշտ տալու սկզբունքով: Այս կիրները կրնան անկեղծօրէն գնահատել իրենց յարաբերութիւնները եւ սթապի դիտարկել զանոնք:

10 ԽՈՐՈՒՐԴ ԺԱՄԱՆԱԿԻ ԾԻՇՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅԱՄԱՐ

Գործարար կիրներ կ'աշխատին իրենք իրենց համար եւ, կը թուի, որ անոնք ունին հիանալի կարելիութիւն քննադատու, որքան կը փափաքին, աշխատավայրէն շուտ դուրս գալ, երբ որ կ'ուզեն, ճանբորդել:

Սակայն, լուրջ գործարար կիրներու համար ազատ ժամանակը աւելի յագեցած է, քան իւրաքանչիւր գրասենեակային աշխատողի մօտ, այդ պատճառով ան գիտէ ազատ ժամանակին արժէքը եւ գիտէ, թէ ինչպէս պէտք է ծախսէ զայն:

«Շտապէ՛, բայց դանդաղ: Ազատ ժամանակի բացակայութիւնը եւ, ընդհանրապէս, ժամանակի պակասը խուճապի մատուցելու պատճառ է: Ծրագրաւորուած աշխատանքի պարագային դուք պիտի կարենաք ընել աւելի շատ բան, քան՝ շտապելով:

«Կառուցեցէ՛ք կարծածամկէտ եւ երկարաժամկէտ ծրագրերներ: Կին ղեկավարը ոչ միայն ընկերութեան ղեկին է, այլ օրինակ՝ բոլոր աշխատողներու համար: Բացի աշխատանքային պարտականութիւններէն ան պէտք է լաւ տեսք ունենայ, 24 ժամ հասանելի ըլլալ գործակիցներուն համար եւ ատոր հետ մէկտեղ՝ ժամանակ գտնէ տնային գործերու եւ անձնական կեանքի համար: Որպէսզի ոչինչ խառնուի իրարու, պէտք է կազմել երկու տեսակ ծրագիր՝ կարճաժամկէտ եւ երկարաժամկէտ: Կարճաժամկէտը յաջորդ օրուան եւ գալիք շաբթուան համար, իսկ երկարաժամկէտը տարուան համար՝ ամիսներու բաժնուած: Կարճաժամկէտի մէջ ներառեցէ՛ք ոչ միայն աշխատանքային հանդիպումները, այլ նաեւ՝ տնային գործերը:

«Ծրագրաւորեցէ՛ք ձեր ժամանակը, ճկուն եղէ՛ք: Դուք կրնաք հիանալի ձեւով ծրագրաւորել ձեր օրը, սակայն անպայման բան մը

այլ կերպով կ'ընթանայ: Աշխատեցէ՛ք այնպէս ընել, որ ձեր ծրագրերները ճկուն ըլլան, որպէսզի կարենաք տեղաշարժել զանոնք՝ ժամանակը անիմաստ ձեւով չկորսնցնելու համար:

«Բաժնեցէ՛ք պարտականութիւնները: Մի փորձէ՛ք ամէն ինչ ինքնուրոյն ընել, դուք ոչ միայն կը յոգնիք, այլ՝ կը հիւժիք: Ունեցէ՛ք անձնական օգնական կամ քարտուղար: Ազատուելով մանր եւ ոչ հրատապ գործերէն, դուք պիտի կարենաք ժամանակ տրամադրել մեծ գործերուն:

«Կերպարանացէ՛ք աշխատանքի վրայ: Որքան ալ շատ գործ ծրագրաւորէ՛ք օրուան համար՝ զբաղելով անոնցմէ մէկով, մի շնորհիւ այլ գործերով: Անջատեցէ՛ք հեռաձայնը, մի մտնէ՛ք հասարակական ցանցեր:

«Մի ստուգէ՛ք ձեր նամակները՝ աշխատանքային օրուան սկիզբը: Եւ ընդհանրապէս, որքան հագուազէ՛ք՝ այդքան լաւ:

Նամակներուն մեծամասնութիւնը կը պարունակէ աւելորդ, անպիտան տեղեկութիւն, որ ուղղակի անիմաստ կը զբաղցնէ ձեր գլուխը: Նամակները ստուգեցէ՛ք երեկոյան, օրինակ, ճաշէն կէս ժամ ետք:

«Շաբաթը մէկ օր անպայման տրամադրեցէ՛ք ձեր հանգիստին կամ դուք ձեզի: Ի հարկէ աւելի լաւ պիտի ըլլար, եթէ աւելի շատ օրեր կարենայիք, սակայն մէկ օրը պարտադիր է:

Այդ օրը ամբողջութեամբ անջատուեցէ՛ք գործերէն:

«Ոչ մէկ գործ յետաձգեցէ՛ք: Գոյութիւն ունի այսպիսի կանոն՝ եթէ գործը տասը վայրկեանէն քիչ ժամանակ կը պահանջէ, պէտք է զայն ծրագրաւորել, այլ զայն պէտք է ընել նոյն օրը:

Եթէ անիկա աւելի շատ ժամանակ կը պահանջէ՝ զայն ընելու

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ԿԱՐԱԿԸ

Երջանկութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ վարակ եւ կ'ապրի հետեւելով վարակիչ հիւանդութեան բոլոր կանոններուն:

Գիտնականներու կարծիքը՝

«Ըսէ ով է ընկերդ: Գիտնականները պարզած են, որ կեանքի հանդէպ դրական վերաբերմունքը կախեալ է ոչ թէ դրամ ըլլալէն կամ չըլլալէն, անձնական կեանքի յաջողութեանն ու ասպարէզի անձն եւ, նոյնիսկ, ոչ առողջութեանն, այլ այն շրջապատէն, ուր մարդը կ'ապրի:

Եթէ մարդուն կը շրջապատեն երջանիկ, ժպտերես եւ բարեհամբոյր մարդիկ, ուստի այդ տրամադրութիւնը կը փոխանցուի նաեւ իրեն: Բացի այդ, գիտնականները կը ցուցնեն բանալի երջանկութեամբ «վարակուելու» բանաձեւը:

Անոնք եկած են այն եզրակացութեան, որ եթէ լաւագոյն ընկերը երջանիկ է, ուստի երջանիկ ըլլալու հնարաւորութիւնները կը մեծանան 25%-ով: Մեզ նոյնիսկ կրնայ երջանկացնել հեռու ծանօթներու երջանկութիւնը:

Ատիկա կապուած է անկէ, որ մարդիկ կը տրամադրուին մօտիկ գտնուող մարդոց ալիքին վրայ, եւ այդ պատճառով մեզի համար աւելի հաճելի է կապ ունենալ կեանքէն զո՞ւ մարդոց հետ:

«Յղիութեան վարակ: Գիտնականները կը պնդեն, որ ոչ միայն երջանկութիւնը կրնայ վարակիչ ըլլալ, այլեւ՝ յղիութիւնը: Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ

կիրներ, որոնք յաճախ կապի մէջ են յղի ընկերուհիներու կամ գործընկերուհիներու հետ, կը յղիանան:

Ամենայն հաւանականութեամբ, կնոջ հետ կապը, որ կը գտնուի հաճելի սպասողական վիճակի մէջ, շատ լաւ կ'անդրադառնայ շրջապատի կիրներուն վրայ, որուն շնորհիւ անոնց մօտ կը կարգաւորուի հորմոնալ հատուածը, որ նպաստաւոր է բեղմնաւորման համար:

«Ինչպէս երկարաձգել երջանկութիւնը: Փորձեցէ՛ք գրկել դուք ձեզ որեւէ բանէ, եղէ՛ք չափաւոր, հակառակ պարագային ամէն ինչ կը դադրի հաճոյք պատճառելէ:

«Երբեք մի նախանձիք: Անոնք չեն երջանիկ, որոնք ամէն ինչ ունին, այլ անոնք, որոնք կը բաւարարուին իրենց ունեցածով:

«Երբեք կանգ մի առնէ՛ք ձեռք բերուածին վրայ: Միշտ նպատակներ դրէ՛ք ձեր առջեւ եւ ձգտեցէ՛ք անոնց իրականացման:

«Պէտք է համեմատուիլ ուրիշի հետ: Արտաքուստ բարեկեցիկ մարդիկ իրականութեան մէջ կրնան դժբախտ ըլլալ:

«Աւելի լաւ է զղջալ ըրածին համար, քան՝ չըրածին: Լսեցէ՛ք կողքիններու խորհուրդները, բայց կայացուցէ՛ք ինքնուրոյն որոշումներ:

«Անոնք, որոնք չեն կրնար հանգստանալ, չեն կրնար արդիւնաւէտ աշխատիլ: Երբեք մի գոհաբերէ՛ք ձեր հանգիստը:

Եղէ՛ք երջանիկ:

ՏՂԱՍԱՐԴՈՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԿԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1.Թանկարժէք եւ շահամուտ արարած: Ոչ ոք կը սիրէ շահամուտ կիրները: Տղամարդը նուրբ հոգեբան է, որ միշտ կը զգայ, թէ երբ իրմէ պարզապէս գումար կը կորզեն: Այս տեսակ կնոջ պէտք է սէր: Ան նիւթական կը փնտռէ կամ հագուստ, բնակարան, կարգավիճակ: Ինքզինք յարգող տղամարդը այդպիսի կնոջ հետ երբեք չի մնար:

Այս տեսակ կիրներ հասարակ տղամարդոց հետ չեն հանդիպիր, եթէ չեն տեսներ յաջողութիւններու ակնյայտ նշաններ:

Անոնք, տղամարդու նուիրած բոլոր իրերը կ'ընկալեն իրեն անհրաժեշտութիւն: Չկայ նուէր՝ չկայ տղամարդ: Տղամարդիկ կ'ընեն, որ այս տեսակ կիրներ երկրորդ ժամադրութեան ատեն արդէն կրնան թանկարժէք կօշիկ ուզել:

2.Շամաժողովրդական սեփականութիւն: Պարկէշտ տղամարդիկ այս տեսակ կիրներու հետ կապ չեն ունենար, որովհետեւ անոնք գուհիկ են ինչպէս տղամարդոց հետ շփման մէջ, այնպէս ալ զրոյցներու կամ հագուստի ընտրութեան հարցով:

Յանդուգն արտաքին տեսքը,

երկար եղունգները, ծխախոտէն կոշտացած ձայնը, անբնական վառ մազերը... Յարաբերութիւններու մէջ ընտրողաբար չեն, անբարոյական են, կը ձգտին նիւթականի:

3. Աներես, կայուն: Այս տեսակ կիրներ ամենամեծ բարբերու տէրը չեն, որովհետեւ անոնք շուտ կը սիրահարուին, եւ իրենց համար նշանակութիւն չունի փոխադարձ է այդ սէրը, թէ՛ ոչ, մերժում չեն ընդունիր: Անոնք նպատակասլաց են եւ չեն սպասեր, որ իրենց հեռաձայնէն, ուստի անոնք միշտ այնտեղ են, ուր կը գտնուի իրենց գոհը: Այս կիրներ չունին բարդոյթներ եւ յաճախ տղամարդը կ'ընդունին իրեն սեփականութիւն:

Տղամարդիկ նոյնիսկ կը վախնան այս տեսակ կիրներէն:

4. Երկաթէ օրիորդ: Աստուք կը կարծեն, որ իրենց պէտք է նուաճել եւ յաճախ այս հմայիչ կիրները առանձին կը մնան, քանի որ իրենց պահանջները շատ բարձր են:

Տղամարդիկ այս տեսակ կիրներէն Չերմութիւն չեն ստանար: Անոնք պարզապէս նման են գեղեցիկ նկարի: Այս տեսակ կիրներ մեծ յաջողութիւններ կ'ունենան աշխատանքի մէջ, սակայն, ոչ՝ սիրոյ հարցերու:

համար ծրագրաւորեցէ՛ք յստակ օր եւ ժամ:

«Մահամահափականցէ՛ք ժամանակը այն գործերուն, որոնք ոչ օգուտ կը բերեն, ոչ հաճոյք կը պատճառեն:

«Ժամանակ չէ՛ք գտնել հետաքրքրական ֆիլմ դիտելու, մօտիկ ընկերուհի հետ հանդիպելու: Սակայն երբ դնէք առաջնահերթութիւնները՝ պիտի տեսնէք, թէ որքան անիմաստ ժամանակ վատ-

նած էք անպէտք բաներու վրայ, որոնք ոչ եկամուտ բերած են, ոչ ալ՝ օգուտ:

«Կարգ ու կանոն: Աշխատանքային սեղանի վրայ, նօթատետրի եւ համակարգիչի մէջ պէտք է կարգուկանոն ըլլայ: Ատիկա կ'օգնէ արագ գտնել պէտք եղած փաստաթուղթերը, փաթեթները եւ ի գուր ժամանակ չվատնել փնտռութեանը վրայ:

ԿԱՐՄԻՐ ՔԱՐՏԸ «ՌԵԱԼԻՆ» ԶԻԱՆԳԱՐԵՑ ԶԱՂԹԱՆԱԿ ԿՈՐՁԵԼ «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ» ԴԵՍ

Այս տարուայ առաջին «էլ կլասիկոն» անցաւ լարուած ու հետաքրքիր պայքարում եւ գրանցուեց կամային յաղթանակ: Սպանիայի առաջնութեան 31-րդ տուրում առաջատար կատալոնական «Բարսելոնան» ընդունեց լաւագոյն եռեակը եզրափակող Մադրիդի «Ռեալին», որին առաջին շրջանում յաղթել էր 4:0 հաշուով եւ գերազանցում էր 10 միաւոր,



բայց Արքայական ակումբին յաջողուեց ռեանշի հասնել: Մադրիդցիները յաղթեցին 2:1 հաշուով եւ ընդհատեցին սպանական ֆուտպոլի պատմութեան ամենաերկար անպարտելի շարքը: «Բարսելոնան» պարտութիւն չէր կրել նախորդ 39 խաղերում եւ սահմանել էր ռեկորդ:

Հանդիպման մեկնարկում տեմպը բարձր չէր եւ կարծես թիմերն ուսումնասիրում էին իրար: Առաջին իրական կոլային պահը եղաւ 10-րոպէին, երբ «Բարսելոնայի» ուրուգուացի յարձակուող Լուիս Սուարեսը Նեյմարի փոխանցումից յետոյ չկարողացաւ գրաւել դատարկ դարպասը: Քիչ անց երկրպագուները յարգեցին հոլանտացի լեգենդար ֆուտպոլիստ Յոհան Կրոյֆի յիշատակը: 14-րդ րոպէին (Կրոյֆը խաղացել էր 14 համարի մարզաշապիկով) ամբողջ ստադիոնը յոտնկայս ծափահարեց «Ոսկէ գնդակի» եռակի դափնեկրի պատուին:

Երկրորդ խաղակէսը սկսուեց տանտէրերի գրոհների ներքոյ: «Բարսելոնան» ագրեսիւ էր գործում, իսկ 56-րդ րոպէին բացեց հաշիւը: Անկիւնային խաղարկման արդիւնքում գլխի հարուածով աչքի ընկաւ սպանացի պաշտպան Ժերարդ Պիկեն, բայց կատալոնացիների ուրախութիւնը երկար չտեւեց: 6 րոպէ անց ֆրանսացի յարձակուող Քարիմ Բենզեման շրջադարձ հարուածով հաւասարեցրեց հաշիւը: Դա «Ռեալի» 100-րդ կոլն էր «Նոու Կամպում»: «Բարսելոնան» ունէր տարածքային առաւելութիւն, բայց կոլային պահեր ստեղծել չէր յաջողում: «Ռեալն» էլ սկսել էր աւելի ագրեսիւ գործել եւ ունեցաւ մի քանի կոլային պահեր: 83-րդ րոպէին երկրորդ դեղին քարտ ստացաւ եւ խաղադաշտից հեռացուեց սպանացի պաշտպան Սերխիո Ռամոսը, սակայն դա «Ռեալին» չէր անգարեց ոչ միայն դիմակայել մրցակցին, այլեւ կամային յաղթանակ կորզել: 85-րդ րոպէին Կրիշտիանու Ռոնալդուն խփեց մադրիդցիները երկրորդ կոլը, որին «Բարսելոնան» պատասխանել չկարողացաւ:

«Ռեալը» գլխաւորող Զինեդին Զիդանը մարզիչի կարգավիճակով յաղթեց իր առաջին «Կլասիկոլում»: Մադրիդցիներն առաջատարին արդէն գիջում են 7 միաւոր, իսկ երկրորդ տեղում գտնուող «Աթլետիկոյին»:

«ԼԵՍԹԵՐԸ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՇԱՐՓՈՒԵԼ ԴԵՊԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Անգլիական Պրեմիեր լիգայի 32-րդ տուրում առաջատար «Լեսթերը» նուազագոյն հաշուով տնային յաղթանակ տարաւ «Սաութհեմփթոնի» նկատմամբ: Կլաուդիո Ռանչերիի թիմի յաղթական կոլն առաջին խաղակէսում խփեց ջամայակացի 32-ամեայ պաշտպան Ուէս Մորգանը: «Լեսթերն» օգտուեց իրեն հետապնդող «Տոտենհեմի» միաւորների կորուստից եւ մեծացրեց առաւելութիւնը: Լեսթերցիներն ունեն 69 միաւոր, երկրորդ տեղում գտնուող «Տոտենհեմը»՝ 62, իսկ լաւագոյն եռեակը եզրափակող «Արսենալը»՝ 58:

ԴՈՐՏՈՒՄԻՆԴԻ «ԲՈՐՈՒՄԻԱՆ» ԶԱՂԹԱՆԱԿ ԿՈՐՁԵՑ

Ֆուտպոլի Գերմանիայի առաջնութեան 28-րդ տուրում Դորտմունդի «Բորուսիան» սեփական խաղադաշտում 3:2 հաշուով դժուարին յաղթանակ տարաւ Բրեմենի «Վերդերի» նկատմամբ: Ընդ որում՝ բոլոր կոլերը գրանցուեցին ընդմիջումից յետոյ: Առաջին խաղակէսում «Բորուսիան» ունէր նկատելի առաւելութիւն, բայց, ստեղծելով մի շարք կոլային պահեր, չկարողացաւ ընդմիջման գնալ հաշուի մէջ առջեւում 0:0: Երկրորդ խաղակէսի սկզբնամասում տանտէրերն առաւելութիւնը վերածեցին կոլի: 53-րդ րոպէին Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը 19-րդ կոլային փոխանցումը կատարեց այս մրցաշրջանում, իսկ գաբոնցի յարձակուող Պլեր-Էմերիկ Օբամեանգը բացեց հաշիւը: Կոլից յետոյ դորտմունդցիները պահպանում էին խաղային առաւելութիւնը, սակայն 69-րդ րոպէին հիւրերն անկիւնային խաղարկման արդիւնքում հաւասարեցրին հաշիւը: Անցաւ եւս 5 րոպէ եւ «Վերդերը» նաեւ անսպասելիորէն առաջ անցաւ հաշուի մէջ: «Բորուսիան» վերջնամասում յաղթանակ կորցեց փոխարինման դուրս եկած Սինձի Կագաւայի ու Ադրիան Ռամոսի կոլերի շնորհիւ: Կոլումբացի յարձակուողին անկիւնային հարուածով կոլային փոխանցում կատարեց Հենրիխ Մխիթարեանը, որը մասնակցեց ամբողջ հանդիպմանը: Վերջին րոպէներին հիւրերն ունեցան խաղը փրկելու հնարաւորութիւններ, որոնք չօգտագործեցին: Երկրորդ տեղում գտնուող «Բորուսիան» շարունակում է 5 միաւոր գիջել առաջատար Միւնխենի «Բաւարիային», իսկ լաւագոյն եռեակը եզրափակող «Հերտայից» առաջ է անցել 19 միաւոր:

ՀԱՅ ԳԵՂԱՍԱՀՈՐԴՈՒՅԻՆ ՍԱՐՄԱՆԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ ԵՒՍ ՄԵԿ ՌԵԿՈՐԴ

Ռուսաստանի գեղասահորդ Եւգենիա Մեդվեդեւան սահմանել է գեղասահի կանանց ազատ ծրագրի ռեկորդ: ԱՄՆ-ի Պոսթոն քաղաքում անցկացուած գեղասահի աշխարհի առաջնութեան ազատ ծրագրում 16-ամեայ մարզուհին վաստակել է ռեկորդային 150.10 միաւոր:



Կանանց ազատ ծրագրի նախորդ ռեկորդը պատկանում էր կորեացի Կիմ Եուն Նային, որը 2010-ին Վանկուվերում կայացած Օլիմպիական խաղերում գրանցել էր 150.06 միաւոր: Պոսթոնում Եւգենիա Մեդվեդեւան ազատ ու կարճ ծրագրի արդիւնքում վաստակել էր 223.86 միաւոր եւ հռչակուեց աշխարհի ախոյեան: Նախորդ տարուայ Դեկտեմբերին նա աշխարհի ռեկորդ էր սահմանել նաեւ կարճ ծրագրում՝ Եկատերինբուրգում անցկացուած Ռուսաստանի առաջնութիւնում հաւաքելով 79.44 միաւոր:

Մոսկուայում ծնուած Եւգենիան ունի հայկական արմատներ: Նրա հայրն Արման Բաբասեանն է, իսկ մայրը նախկին գեղասահորդ է: Յիշեցնենք, որ աշխարհի առաջնութիւնում Հայաստանը ներկայացնում էր 16-ամեայ Անաստասիա Գալուստեանը, որը նուաճել էր ազատ ծրագրի ուղեգիր եւ գրաւեց 24-րդ տեղը:

ԱՐՈՆԵԱՆԸ 7-ՐԴՆ Է, ԿԱՐԵԱԿԻՆԸ՝ 8-ՐԴԸ

Հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնեանը շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) դասակարգման աղիւսակում պահպանել է 7-րդ տեղը: Հայ գրոսմայստերն ունի 2784 վարկանիշ:



ՖԻԴԵ-ի առաջատարը դարձեալ աշխարհի ախոյեան Մագնուս Կարլսենն է, որին յաջորդում են ռուս Վլադիմիր Կրամնիկն ու ԱՄՆ-ը ներկայացնող իտալացի Ֆաբիանո Կարուանան: Մոսկուայում կայացած շախմատի աշխարհի ախոյեանի չաւակնորդների մրցաշարի յաղթող Սերգէյ Կարեակինը բարձրացել է 8-րդ տեղ:

- 100 լաւագոյն գրոսմայստերների ցուցակում տեղ են գտել Հայաստանի հաւաքականի եւս 3 ներկայացուցիչներ: Գաբրիէլ Սարգսեանը 45-րդն է, Սերգէյ Մովսէսեանը՝ 92-րդը, իսկ Վլադիմիր Յակոբեանը՝ 98-րդը: ՖԻԴԵ, Մարտի դասակարգման աղիւսակ
- 1. Մագնուս Կարլսեն (Նորվեգիա) - 2851 վարկանիշ
- 2. Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան) - 2801
- 3. Ֆաբիանո Կարուանա (ԱՄՆ) - 2795
- 4. Անիշ Գիրի (Հոլանդիա) - 2790
- 5. Մաքսիմ-Վաչէ Լազրաւ (Ֆրանսա) - 2788
- 6. Հիկարու Նակամուրա (ԱՄՆ) - 2787
- 7. Լեւոն Արոնեան (Հայաստան) - 2784
- 8. Սերգէյ Կարեակին (Ռուսաստան) - 2779
- 9. Լիրեն Դի (Չինաստան) - 2777
- 10. Ուեսլի Սո (ԱՄՆ) - 2773

ԴՈՒՆԳԱՆ ԿԱՐՈՂ Է ՅԵՈՎՅՈՒԵԼ ՊՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՑ

Պրագիլիայի ֆուտպոլի կոնֆեդերացիան քննարկում է ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Դունգային զբաղեցրած պաշտօնից հեռացնելու տարբերակը: Երկրի ֆուտպոլային ղեկավարութեանը չեն գոհացնում ազգային թիմի վերջին արդիւնքները, ինչպէս նաեւ Մադրիդի «Ռեալի» պաշտպան Մարսելոյին չհրաւիրելու հետ կապուած կոնֆլիկտները: Աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլի հարաւամերիկեան գոտու մրցաշարի 6-րդ տուրից յետոյ Պրագիլիայի հաւաքականն ունի 9 միաւոր եւ Պարագուայի հետ բաժանում է 6-7-րդ տեղերը:

ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ 4 ԳՆՂԱԿ ՈՒՂԱՐԿԱՅԻՆ ԳՈՒՄԱՏԵՄԱԼԱՅԻ ԴԱՐՊԱՍԸ

Ֆուտպոլի աշխարհի 2018թ. առաջնութեան ընտրական փուլում ԱՄՆ-ի հաւաքականը տանը 4 անպատասխան գնդակ ուղարկեց Գուատեմալայի դարպասը: Շիմբի չորրորդ տուրից յետոյ Գուատեմալան ունի 6 միաւոր, ԱՄՆ-ը՝ 7, Տրինիդադ եւ Տոբագոն՝ 10, իսկ Սենտ Վինսենթ եւ Գրենադինները թիմը կրել է 4 պարտութիւն: Յիշեցնենք, որ Հայաստանի ազգային հաւաքական Մայիսին ԱՄՆ-ում կայանալիք հաւաքի ընթացքում ստուգողական հանդիպում է անցկացնելու Գուատեմալայի հետ, որը 95-րդն է ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում:

«ՅԵՌՈՒ ԿԵՑԷՔ ԴՈՒՔ ՎԱԽԿՈՏՆԵՐ...»

Շարունակուած էջ 7-էն

բաժնուի 11 շրջաններու՝ իր իմբապետներով եւ տասնապետներով: Սկիզբը կային պատրաստի 500 գինեակներ, որոնց թիւը համալրուելով հասաւ 1000-ի:

Հայկական շրջանին անդորրութիւնը հսկելու նպատակով կը ստեղծուի ոստիկանութիւն (ոստիկանապետներ կ'ըլլան Յարութիւն Մոմճեան, Գէորգ Պապոյեան եւ Մկրտիչ Արարատեան): Կը ստեղծուի զինագործարան՝ ուսմբեր, փամփուշտներ եւ զէնքեր պատրաստելու: Հայեր կը շինեն ինքնաշէն «Վրէժ» (Canon Armenians) թնդանօթը, որուն ամպագողգող ձայնը անուարասի կ'ազդէ թշնամիներուն: Քեմալական չէթէներ բազմիցս կը փորձեն թափանցել հայկական թաղեր, բայց միշտ ալ ապարդիւն: 9 ամիսներ ինքնապաշտպանութիւնը կ'ընթանայ կատարեալ համերաշխութեամբ եւ արդիւնաւետութեամբ: Գոյացած էր ձեւով մը ինքնաբոյս կառավարութիւն, ուր բժշկական օգնութիւնը անվճար էր, իսկ պարէնը կը բաշխուէր ամենայն հաւասարութեամբ: Պարէնաւորման վարչութեան նախագահն էր Տէր Ներսէս Քհնյ. Պապոյեանը (Պոպոյի Ներսէս): Միւս կողմէ թուրքեր բախումներ կ'ունենան նաեւ ֆրանսական ջոկատներուն հետ: Ֆրանսացի զինուորականներ բարձր գովեստով կը դրուատեն հայոց դիմադրական ոգին եւ աշարջութիւնը:

Ֆրանսացի յայտնի զինուորական գրող Փօլ տը Վիու Այնթապը կ'անուանէ «Անատոլուի Վերտէնը»: Իսկ թուրքեր կը խոստովանին. «Եթէ հայերն ամէնուրեք այնթապցիներուն նման կուռէին, մեր վիճակը չափազանց ողբալի կ'ըլլար»:

Քեմալականներ համոզուելով որ անհնար է վերջ տալ հայկական դիմադրութեան, անձնատուութիւն կը խնդրեն ֆրանսացիներու միջնորդութեամբ:

Բանակցութիւնները բացառիկ ճարտարութեամբ կը վարէ Այնթապի Ղեւոնդ Երէցը:

Բախումները կը դադրին 8 փետրուարին: Հայեր տուած էին 91 նահատակ, իսկ թրքական կողմը ունէր շուրջ 10 հազար զոհ: Ֆրանսացիք շնորհաւորեցին հայոց յաղթանակը: Սակայն, թուրք-ֆրանսական դաշնագիրին հետեւանքով Կիլիկիան (ներառեալ Այնթապը) անցաւ թուրքիոյ, որուն պատճառով այնթապահայեր զանգուածաբար (շուրջ 17 հազար) փոխադրուեցան Սուրիա, Լիբանան, Ֆրանսա եւ ԱՄՆ՝ իրենց հերոսներուն առաջնորդութեամբ: Այնթապցիք իրենց հրացանները պատուով դրին պատեան:

Խորհրդային Հայաստանի հանդէպ աշխարհացրիւ այնթապցիք անտարբեր չմնացին, զայն համարելով խորհրդանիշը հայոց վերածնունդին: Ներգաղթին (1946-48 թ.) շուրջ 6000 այնթապցիք հաստատուեցան հայրենիք: Անոնք ունէին երազ մը՝ յաւերժացնել Այնթապը՝ Նոր Այնթապով եւ դիմելով Խ. Հայաստանի ղեկավարութեան, Գերագոյն Խորհուրդի նախագահ Նազուշ Յարութիւնեանի հրամանագիրով Մասիսի շրջանի թագա գիւղը 1970 Սեպտեմբեր 10-ին կոչուեցաւ Նոր Այնթապ:

Ապա գիւղին մէջ կառուցուեցաւ ժաննակի գործարան սփիւռ-

բահայութեան ջանքերով: 1983-ին բացուածը կատարուեցաւ հերոսամարտի յուշարձանին: 2000 Սեպտեմբերին տեղադրուեցան հերոսամարտին երեք ղեկավարներուն կիսանդրիները. ապա՝ գրօսագիր, յուշագրիչ եւ եկեղեցի: Այնթապի պատմութեան եւ անոր հերոսամարտի մասին գրեցին բազմաթիւ երախտաւորներ՝ Աւետիս Գալեմբեարեան, Գէորգ Սարաֆեան, Ա. Կեսար, Երուանդ Պապոյեան, Գէորգ Պապոյեան, Եղիա Տոլպագեան, Ռուբէն Սահակեան, Շմաւոն Թորոսեան: Սակայն կ'ուզէք ընդգծել մասնաւորաբար երկու անուններ՝ Թորոս Թորանեան եւ Արմէն Յարութիւնեան: Արդարեւ, Թորոս Թորանեանի հետեւողական ջանքերով 1991-ին լոյսին եկաւ Տ. Ներսէս Ա. Քհնյ. Թաւուքճեանի «Տառապանքի Օրագիրը» խիստ արժէքաւոր սկզբնաղբիւր-օրագրութիւնը՝ որպէս փաստ-վկայութիւն այդ օրերու հերոսին կողմէ արձանագրուած (գիրքին հրատարակման ողիսականին մասին ան գրած է իր «Յուշապատում» գործին մէջ՝ էջ 104-109): Նաեւ ան հրատարակեց Եղիա Տոլպագեանի «Այնթապի Ու Այնթապահայը» (Երեւան 1992-Հալէպ 1994) արժէքաւոր գիրքը: Իսկ մեկնեանա-բարերար Արմէն Յարութիւնեան 2005-ին ընթերցողներու սեղանին յանձնեց «Տոմար Արձանագրութեան Հայ Ազգային Միութեան- Այնթապ- 1920» բացառիկ արժէք ունեցող հատորը՝ որ օրը օրին գրուած փաստագրութիւնն է Այնթապի հերոսամարտին՝ իր նրբին մանրամասնութիւններով: Շնորհակալութիւն մեր օրերու հայ գիրքի երկու երկրպագուներուն: Այնթապի հերոսամարտին ռազմական ղեկավարը հերոսամարտին 43-րդ տարեդարձին առիթով կը պատգամէր. «Ապրիլ 1-ի տօնակատարութիւնը, որ կը կատարենք ամէն տարի, որպէս պատգամ կ'ըսէ մեզի- միասնականութեան ոգիով, ձեռք ձեռքի տուած, ջանանք գտնանք ինչ որ սերունդը, որպէսզի անոնք ըլլան քրիստոնէական հաւատքով անած, հայկական նկարագրով ու դիմագծով հասակ նետած, հայ մշակոյթով թրծուած ազգասէր ու հայրենասէր զաւակներ, միշտ պատրաստ զինուորագրուելու այն մարտին, որ պատրաստ ենք մղել այժմ սփիւռքի մէջ, ի խնդիր մեր գոյութեան եւ ի պաշտպանութիւն մեր մշակոյթին ու մեր բարոյական առաքինութիւններուն»: Պատմաբան, հնչակեան մտաւորական Եղիա Տոլպագեան կը գրէ. «Այնթապի հայութեան հերոսամարտը իր տեղական հանգամանքներէ վեր մասն է կազմում համայն հայ ժողովրդի պատմութեան: Այնթապը հերոսաբար կուռեց եւ յաղթանակը պատկանում է ողջ հայութեանը: Այնթապի հայոց նահատակները ամբողջ հայութեան նահատակներն են: Մեր ժողովուրդը պարտական է Այնթապի նահատակներին: Պարտինք այդ հերոսամարտը դիտել համաժողովրդական հորիզոնով, Այնթապի հերոսամարտի մէջ տեսնել հայութեան ցեղամարտը...»: 1920-ին «Հեռու կեցէք դուք վախկոտներ» երգած հերոսներու յուշարձանին կեդրոնական մասին վրայ արձանագրուած է.

«ՅԱԻԵՐԺ ՓԱՌՔ ԱՅՆԹԱՊԻ 1920 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՆՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ»:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՋԻՐԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

Գոհ էր նաեւ Վեհափառ Հայրապետը որ չուշացաւ Եղիշէ Սրբազանը արքեպիսկոպոսութեան բարձրացնելու:

Եթէ գրական վաստակ չթողուց իր ետին, Սրբազան Հայրը յարատեւ ընթերցասէր եւ գնահատող բարձրաստիճան հոգեւորական մը եղաւ: Երբ գիրք մը կամ երկու գիրք կը դրկէի իմ հրատարակութիւններէն, իսկոյն գրաւոր, շատ կարճ նամակով անպայման իր գոհունակութիւնը եւ գնահատանքը կը յայտնէր՝ անկեղծօրէն եւ եղբայրօրէն: Վերջին իր նամակը, միայն ամիս մը առաջ, երբ ուղարկած էի Երջանկայիշատակ Շնորհք Պատրիարք Գալուստեանի երկու գիրքերուն թարգմանութիւնն իրենց հայերէն բնագիրներով: Շնորհք Պատրիարքի հանդէպ բացառիկ հիացում ունէր, երբ Շնորհք Վարդապետ Գալուստեան 40-ական թուականներուն իրենց տեսուչն ու ուսուցիչն էր Անթիլիասի Դարեան վանքին մէջ: Վերջին անգամ տեսայ սիրելի Սրբազանը Նիւ Եորքի Ս. Ներսէս Աստուածաբանական ձեմարանը, ուր հրաւիրուած էի տեսչութեան կողմէ օր մը ամբողջ դասախօսելու: Հոն էր Սրբազանը, երբեմն իմ ուսուցիչը, նստած կը հետեւէր: Վերադարձիս նամակ մը ստացայ գնահատանքով եւ ջերմ զգացումներով լի:

Իմ կարգիս ես ալ կը հետեւէի հեռաւոր Գալիֆորնիայէն Եղիշէ Արքեպիսկոպոսին պարբերական քարոզներուն ու մանաւանդ շատ զգայուն հարցազրոյցը կը դիտէի իր բովանդակալից կեանքի մասին: Որքան ջերմութիւն, հոգեւոր կեանքի նկատմամբ սէր եւ աննահանջ գնացք, որոնք այնքան անձնական կեանքի նոյնքան եւ իսկա-

կան ինքնութեան դրոշմ կը ձգէին զինք ունկնդրող ճեմարանականներուն վրայ, ինչպէս նաեւ իմ վրայ, տարիներու հեռարձակ փայլատակումներով:

Սրբազան Հայրը ընթերցասէր եղաւ ըսի, եղաւ նաեւ քաջ քարոզիչ, առանց թուղթի կտոր մը աչքին առջեւ: Հոգիէն կը բխէր, միտքէն կը փայլէր, եւ իր ուժեղ ձայնի թափով կը գրաւէր ունկնդիրները: Յուզումով երիզի վրայ հետեւեցայ Սրբազան Հօր յուղարկաւորութեան եւ Վերջին Օծման Ս. Պատարագին՝ Ս. Վարդան Մայր Տաճարէն ներս, ունկնդրեցի Առաջնորդ Գերաշնորհ Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի յուզիչ դամբանականը, որ իսկապէս բացառիկ եւ ամենէն յարգի ու պատշաճ տուրքը եղաւ վախճանեալ բարձրաստիճան հոգեւորականին, որուն յուղարկաւորութիւնը կը կատարուէր Աւագ Չորեքշաբթի օր հանդիսաւոր եւ արժանի շուքով: Խաժակ Սրբազան յուզեց մեզ, երբ կը փոխանցէր լուսահոգի վախճանեալ Եղիշէ Սրբազան Հօր փափաքը Զատիկի Կիրակին, այսօր, ներկայ ըլլալու Մայր Տաճար, եւ սակայն Աւագ Չորեքշաբթին կանխեց, եւ Խաժակ Սրբազանի յուզիչ խօսքը աւարտեցաւ՝ «Եթէ հոս չտօնեց Սուրբ Յարութեան տօնը, Երկնաւոր Հօր մօտ անտարակոյս արժանի պիտի ըլլար տօնելու Սուրբ Զատիկը»:

Յիրաւի Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմը իր պատմութեան մէջ ջինջ ու մնայուն բարձրութիւն մը արձանագրած է արդէն յանձին բարեկիշատակ Եղիշէ Արքեպիսկոպոս Կիզիրեանի բազում տարիներու հովուական ծառայութեան շնորհիւ: Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Advertisement for the 100th anniversary of the Armenian Genocide. It features logos of the Armenian Genocide Memorial Center and the National Archives of the Republic of Armenia. The text reads: 'ՀԱՅՈՑ ՊԱՀԱՉԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ 100-ԱՄԵԱԿԷՆ ԵՏՔ' (The Armenian Genocide 100 Years). It lists the organizing committee: 'ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՏԻ ՄԻԱՅԵԱԼ ՄԱՐՄԻ ԵՒ ՀԱՅ ԻՐԱՆԱԲԱՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ' (The National Archives of the Republic of Armenia and the Armenian Diaspora in Iran). It lists the organizing committee members: 1. Պաշտօնակազմի ղեկավար Ստանիսլավ Կարամյան, 2. Օրինական Դիտակիչ Իրաւաբաններ՝ Եղիշ Միսաեան եւ Գամիկ Քերոսեան, 3. Հայկական Կուսակցութիւններու Պատկերացում Կուսակցութիւններու Ներկայացուցիչներ Համադրող Հրաչ Մեփիքեան. 4. Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լոսաւորիչ Եկեղեցւոյ Մրահ 1510 E. Mountain St., Glendale, CA 91207. It also mentions the location of the event: 'Չովացուցիչներու եւ Սուրճի Հիւրասիրութիւն Կէտօրուան ճաշի Պատուէր՝ \$15.00'.

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆՐԱԲԱԽԱՔ

ԹՐՔԱԿԱՆ ԲԻՊԱՏՈՍԱՐԱՆ

6300 Wilshire Blvd., Los Angeles / Crescent Heights

ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ, ԺԱՄԸ 1-ԻՆ



ՀԱՆՐԱԿԱՌՔՈՎ
ՓՈՒՆԱԴՐԱՄԻՋՈՑ՝
ԿԷՍՕՐՈՒԱՆ ԺԱՄԸ 12ԻՆ

ՄԵԿՆՈՒՄԻ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԱՅՐԵՐ

ԿԼԵՆՏԷՅԼ	ՎԵՆ ՆԱՅՍ	ՆՈՐԹ ՀԻԼՁ
ՍԱՆԹԱ ԱՆԱ	ԹԱՀԱՆԿԱ	ՊԸՐՊԵՆՔ
ՓԱՍԱՏԻՆԱ	ԷՆՄԻՆՕ	ՆՈՐԹ ՀՈՒԿՎՈՒՏ
ՄՈՆԹԵՊԵԼԼՕ	ՔԱՆՈԿԱ ՓԱՐՔ	ՀՈՒԿՎՈՒՏ

WWW.RALLYFORJUSTICE.ORG | 1(877)477-2559

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ

